Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

7(724)
2026
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԱՐՑԱԽԻ ԲԱԼԻԿՆԵՐԸ ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆ

Արցախ, իմ սիրտ, քեզ սիրում եմ,
Քեզանով շնչում եմ ես:

Երևանում արդեն գործում է «Արցախի բալիկներ» մանկապատանեկան համույթը, որը վերածնվել է Մոսկվայում գործող «Դիալոգ» հասարակական կազմակերպության աջակցությամբ: Հունիսի 30-ին Երևանի Հովի. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնի դահլիճում հանդիսատեսները, որ հիմնականում արցախցիներ էին, ըմբոշխնեցին «Արցախի բալիկներ» համույթի հերթական համերգը: «Ջոն Արցախին» խորագիրն էր կրում Գայանե Հարությունյանի ղեկավարությամբ գործող մանկապատանեկան համույթի համերգը: Այս անգամ ևս արցախցի մանուկները հանդիսատեսին ոգևորեցին, հուզեցին, ստիպեցին արտասվել և վերջապես՝ դարձյալ մտածել տունդարձի մասին:

Բեմը ձևավորված էր արցախցի գյուղացու հիմնական գործիքներով՝ խնոցի, արկանք, սալա և այլն: Ծրագրում ընդգրկված էին արցախյան ազգագրական սիրված այնպիսի երգեր, ինչպիսին են՝ «Ջոն Արցախին», «Ղարաբաղի բալիկն ենք», «Շուշվա կեղը», «Տմբլաչի Խաչան», «Վեր կաց, եղբայր իմ», «Ո՞ւր եք, տղաներ», «Պիտի ապրենք» և այլ երգեր՝ պարային կատարումների և թատերականացված ասմունքի, արցախյան բանահյուսության ուղեկցությամբ: Համերգն սկսվեց արցախյան երանելի օրերի պատմությամբ. թռռնիկները հյուր էին գնացել Դեդո-Բաբոյին, ու պարզ է Բաբոյի ուրախությունը: Բաբոյի օգնությամբ նկարեցին իրենց տունը:

Յուրաքանչյուր կատարում ստիպում էր հանդիսատեսին ծափողջյուններով հայտնել շնորհակալություն Արցախում ծնված, սակայն այսօր հայրենի ծննդավայրից 2023-ին բռնի հեռացած երեխաներին: 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված 44-օրյա պատերազմից հետո շատ բան փոխվեց աշխարհի ամենաազատ Արցախ աշխարհում: Նույն երեխաները և նրանց հասակակից հազարավոր արցախցի բալիկներ մեկ տարուց ավելի մնացին շրջափակման մեջ, տեսան սով ու ամենաահավորը՝ շարունակվող պատերազմ:

Նրանց գլխավերևով թշնամու արձակած արկերն են անցել, պայթել աչքի առջև: Եղավ նաև բռնի տեղահանությունը, որ տևեց մի քանի ծանր ու մղձավանջային օրեր: Եվ այս ամենը տեսած երեխաները երգեցին «Ղարաբաղի բալիկներն ենք» երգը: Այսօր դարձյալ միասին են համույթի երեխաները՝ սիրելի գեղարվեստական ղեկավարի՝ Գայանե Հարությունյանի գլխավորությամբ: Միասին են ու միշտ կատարելագործում են իրենց տաղանդը, շնորհքը: Մեծ ոգևորությամբ կատարեցին Հայոց Այբուբենը.

Արարիչ Բովանդակ Գոյության Դատավոր Երկնային Զորավոր Էություն...

«Արցախի բալիկներ» մանկապատանեկան համույթը կազմավորվել է 1989 թվականին՝ Սերգեյ Հարությունյանի ջանքերով: Գայանե Հարությունյանը 1998-ից համույթի խմբավարն էր, 2008-ին նշանակվել է գեղարվեստական ղեկավար: Բռնի տեղահանությունից հետո եղավ հանդիպում «Դիալոգ»-ի հիմնադիր-նախագահ Յուրի Նավոյանի հետ, որից հետո համույթը շարունակեց իր գործունեությունն արդեն Երևանում: Հունիսի 30-ի համերգն ավարտվեց «Ղարաբաղ իմ չքնաղ» երգով, որը պահանջ ու հրաման էր բոլորիս՝ պետք է վերադառնալ Հայոց Արցախ: Կազմակերպիչները շնորհակալություն հայտնեցին համերգի հովանավորին, հանդիսատեսին, Ազգային տիկնիկային թատրոնի ղեկավարությանը: Թատրոնի սրահում էլ գործում էր նաև ցուցահանդես-վաճառք: Արցախցիներն իրենց ձեռքի աշխատանքներն էին ցուցադրել:

Համերգից հետո զրուցեցի հանդիսատեսների հետ: Հադրութի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի տնօրեն Իրա Թամրազյանն ասաց՝ համերգի ողջ ընթացքում արտասվել է: «Արցախում ծնված այս երեխաներն առավել են կարոտում հայրենի տանը», - ասաց Ի. Թամրազյանը, որը երկար տարիներ աշխատում է երեխաների հետ ու լավ է ճանաչում նրանց հոգեբանությունը: «Արցախի բալիկներ» համույթի գեղարվեստական ղեկավար Գ. Հարությունյանը տեղեկացրեց՝ համերգին հրավիրել էին երեխաների առողջության և զարգացման կենտրոն ՀԿ-ի «Արև-երեխաներ» և Արցախի թեմի կիրակնօրյա դպրոցի երեխաները:

ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ

ԵՎԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ, 11տ.

ԴԵՊԻ «ԱՐԱԳԱԾ» ՃԱՄԲԱՐ

Երևանում գործող «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամը մշտապես եղել է Արցախի աջակիցը: 2020-2023թթ. Արցախում տեղի ունեցած ողբերգական դեպքերի ու արցախցիների բռնի տեղահանությունից հետո «Թեքեյան Կենտրոն»-ն առավել սկսեց աջակցել մեր հայրենակիցներին: «Թեքեյան Կենտրոն»-ը նաև աջակցում է ՀՀ-ում՝ Երևանում, Ստեփանավանում, Կարբիում և Գյումրիում գործող Վահան Թեքեյանի անվան դպրոցներին: Արցախի Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորի թիվ 1 միջնակարգը նույնպես կրում էր մեծ գրողի անունը, և թեքեյանականները մշտապես աջակցում էին այդ կրթօջախին: «Թեքեյան կենտրոն»-ը յուրաքանչյուր տարի կազմակերպում էր նաև Թեքեյանական օլիմպիադա՝ նշված 5 կրթօջախների 8-րդ դասարանցիների մասնակցությամբ: Այդ կրթական միջոցառումը վերածվում էր մեծ տոնի: Օլիմպիադայի հանձնախմբի կազմում ընդգրկված էին մեր ժողովրդի կողմից սիրված ու ճանաչված մտավորականներ՝ գրողներ, դերասաններ (Վարդուհի Վարդերեսյան, Գուժ Մանուկյան), դասախոսներ: «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամը 2010 թվականից իրականացնում է նաև «Ամառային ճամբար» ամենամյա ծրագիրը: Այն հնարավորություն է ընձեռում երեխաներին իրենց ամառային հանգիստն անցկացնել մեր հայրենիքի գեղատեսիլ վայրերում, դառնալու ինքնուրույն և ինքնավստահ: Եղավ նաև ցավալին. 2020թ. կորոնավիրուսի համավարակի և 44-օրյա պատերազմի պատճառով ծրագիրն ընդհատվեց: Սակայն «Թեքեյան կենտրոն»-ը, տնօրեն Արմեն Ծուլիկյանի գլխավորությամբ, պատերազմի օրերին, դրանից հետո էլ մշտապես իր ծրագրերում արցախցիներին ընդգրկում էր: Կենտրոնի դահլիճում կազմակերպվում էին հանդիպումներ տեղահանված արցախցիների հետ, իրականացվում էին տարբեր ծրագրեր՝ հումանիտար, կրթական, մշակութային: Այս տարի «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամը կրկին իրականացնում է «Ամառային ճամբար» ծրագիրը՝ այս անգամ ընդգրկելով Արցախից բռնի տեղահանված երեխաների: Ծրագրի շահառուները՝ «Արցախի արվեստագործների միություն» ՀԿ 32 սաներն ու մանկավարժները, որոնք Ստեփանակերտից, Մարտակերտից, Հադրութից են, Հադրութի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի տնօրեն Իրա Թամրազյանի ղեկավարությամբ, իրենց յոթօրյա ամառային հանգիստը կանցկացնեն Մեղրաձորի «Արագած» ճամբարում:

Հուլիսի 25-ին ճամբարականները, նրանց ծնողները հավաքվել էին «Թեքեյան կենտրոն»-ի մոտ: Նրանց դիմավորեց կենտրոնի ներկայացուցիչ Սեդա Խաչատուրյանը, հակիրճ ներկայացրեց իրենց կառույցի մասին՝ կարևորելով «Ամառային ճամբար» ծրագիրը: Ասաց. «Ծրագիրը նաև մեծապես նպաստում է մեր երկրի տարբեր անկյուններում բնակվող երեխաների մերձեցմանը, նրանց բազմակողմանի զարգացմանը մտավոր, հոգևոր, մշակութային գիտակցության, ֆիզիկական առումներով: Տարատեսակ մտավոր և ժամանցային խաղերի, մարզական, մշակութային միջոցառումների, ազգային երգ ու պարի ուսուցման, հիշարժան վայրերի այցելության շնորհիվ երեխաների ամառային հանգիստը դառնում է առավել բովանդակալի ու հետաքրքիր: Ճամբարը զարգացնում է անհատականությունը, պարգևում անմոռանալի պահեր: Ընդհանրապես «Ամառային ճամբար» ծրագրում ընդգրկվել է շուրջ 720 շահառու Հայաստանից և Արցախից՝ մասնավորապես 10-14 տարեկան գերազանց առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքների երեխաներ»: Ճամբարականների հետ ուղևորվեցի Մեղրաձոր: Բարձր տրամադրություն էր տիրում ավտոբուսում: Ճամբարում, տնօրեն Անդրանիկ Բաբայանի գլխավորությամբ, արցախցիներին դիմավորեցին մեծ խանդավառությամբ: Սկզբում խմբով լուսանկարվեցին: Ա. Բաբայանը ծանոթացավ երեխաների նրանց, ղեկավարի ու կամավոր ջոկատավար Անժելիկա Ալեքսանյանի հետ, որը ծնվել է Հադրութում: Ճամբարականների խմբում է նաև Անժելիկայի քույրը՝ Նինան, որը ցանկանում է դերասանուհի դառնալ: Հուլիսի 1-ին Հովի. Թումանյանի անվան տիկնիկային ազգային թատրոնի բեմում տեղի ունեցավ Կարինե Քոչարյանի «Սարից այն կողմ» պիեսի բեմականացումը: Գլխավոր դերերից մեկում Նինան էր: Ընթացքում որոշեցին հետագա ճամբարի ջոկատավարների ուղեկցությամբ արցախցի երեխաները տեղավորվեցին իրենց սենյակներում: Հիշեցի՝ 2017-ին նույն ճամբար ուղեկցել էի նաև բերձորցի աշակերտներին: Ճամբարի տնօրենը տեղեկացրեց՝ շատ է եղել Արցախում, շրջել է շատ բնակավայրերում: Հարցին՝ կազմակերպվելու՞ են արշավներ տեսարժան ու պատմամշակութային վայրեր, Ա. Բաբայանն ասաց՝ անպայման:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՈՏՆԱՀԵՏՔԵՐՈՎ

Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ:
Նրանց աչքերում՝ գազազած գալի՝
Գալարվում է գիժ Դև-Բեդը մոլի,
Խելագար թրռչում քարերի գըլխով,
Փըրփուր է թքում անզուսպ երախով,
Թըքում ու զարկում ժեռուտ ափերին,
Փընտրում է ծաղկած ափերը հին-հին,
Ու գոռում գիժ-գիժ.
-Վաշ-վիշշ, վաշ-վիշշ…

Հովհ.Թումանյան

Թերևս այլ համապարփակ, տիպիկ նկարագիր Լոռվա չքնաղ բնաշխարհի մասին լինել չէր կարող: Սա ոչ թե մարդկային հզոր երևակայության արգասիք է, այլ աստվածաշնորհ մի պարգև, որն առավել կենդանի ու խոսուն է, ինչպես այդտեղ ապրող մարդը: Մարդն ու Բնությունն այստեղ մի հրաշալի ներդաշնակություն են կազմում՝ միմյանց հարազատ ու միշտ իրար լրացնող: Այս աշխարհում հայտնված մարդը ակամա դառնում է նրա մի մասնիկը՝ նույնքան պարզ ու բյուրեղյա, նույնքան անխառն ու անարատ…

Երբ ոտք ես դնում այս գողտրիկ աշխարհ, քեզ ընդառաջ են գալիս Մեծ Լոռեցու անմահ հերոսները՝ փոքրիկ Մարոն՝ իր մեծ ողբերգությամբ, Անուշը՝ իր չվայելած սիրով, Գիքորը՝ իր խեղճ ու անմեղ հայացքով, Համբոն՝ Գիքորի շորերը շալակած տուն դառնալիս, Քաջ Նազարը՝ «անհաղթ հերոսի» դրոշակը ձեռքին, Բարեկենդանը՝ բրինձն ու յուղը շալակած, Ջախորդ Փանոսը՝ իր ձախորդություններով, Շունն ու Կատուն՝ իրենց խոր անհաշտությամբ, Լոռեցի Սաքոն՝ իր հսկա կերպարանքով, Ծերունին՝ իր ծանր հառաչանքով… Հարյուրավոր հերոսներ, որ ապրել, ապրում են ու շարունակելու են ապրել հանճարեղ Թումանյանի հետ: Հրաշք բնությունն ինքն է խոսում քեզ հետ՝ չսպասելով քո միջամտությանը: Հնարավոր չէր այս հրաշագեղ բնության գրկում երգիչ կամ բանաստեղծ, նկարիչ կամ բանահավաք չդառնալ: Ամեն մի գողտրիկ անկյուն, մի ավանդազրույց, մի հերոսապատում, մի լեգենդ, մի հեքիաթ ու մի զարմանահրաշ պատմություն ունի ծրարած իր խորքերում: Պատահական չեն ծնվել այս խոսքերը Թումանյանի հոգում.

Ամեն անգամ Քո տըվածից երբ մի բան ես Դու տանում,
Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ինչքա՜ն է դեռ մընում,
Զարմանում եմ, թե, ո՜վ Շռայլ, ինչքան շատ ես տըվել ինձ,
Ինչքա՜ն շատ եմ դեռ Քեզ տալու, որ միանանք մենք նորից:

Այս խորախորհուրդ ակունքներից է սնվել հանճարեղ Լոռեցին՝ դարերում հավերժանալով իր անմահ գործերով:

«Արարատյան արժեքների կրթական հիմնադրամի» կազմակերպած հայրենաճանաչողական շրջագայությունն ուներ հետևյալ օրակարգը.

1. Կանգառ Ապարանի ջրամբարի մոտ. այցելություն 5-րդ դարում կառուցված Սբ Վարդան և ջրամբարում մնացած Սբ Պողոս-Պետրոս եկեղեցիներ.

2. Կանգառ Դսեղի «Քարե սնկերի» մոտ. դիտարան, որտեղից բացվում են Լոռվա աշխարհի հրաշք տեսարանները, և որտեղ նստել ու ստեղծագործել է Հովհ. Թումանյանը.

3. Այցելություն Դսեղի Հովհ. Թումանյանի տուն-թանգարան.

4. Այցելություն Դսեղի «Ծովեր» լիճ և հրաշք տեսարանների վայելում: Թումանյանի ստեղծագործությունների ունկնդրում.

5. Վերադարձ:

Վայելելով ճանապարհին մեզ հանդիպող չքնաղ տեսարանները, որից հնարավոր չէր կտրվել (հայացքով ուղեկցում էինք մինչև տեսադաշտից հեռանալը)՝ խումբը կանգ առավ Ապարանի ջրամբարի մոտ: Հայացքդ իսկույն շոյում են թավ անտառներն ու ծաղկազարդ դաշտերը. ասես մի անտես նկարիչ է վրձնել այդ գեղեցկությունը՝ այցելուներին ավելի ևս գրավելու և բնությանը ծուլելու համար:

Հիմնադրամի խորհրդի նախագահ Նաիրի Հոխիկյանը այստեղ ծանոթացրեց պահպանված հուշարձաններին: Սբ Վարդան եկեղեցին կառուցվել է 5-րդ դարում՝ Վարդան Մամիկոնյանի պատվին: Պահպանվել են խաչքարեր և մի դամբարան, որը կառուցվել է 451 թվականին տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտի նահատակների հիշատակին: Ամենատպավորիչը ջրամբարի մեջ հայտնված Սբ Պողոս-Պետրոս բազիլիկ եկեղեցին էր, որն անվանում են նաև ջրի տակ անցնող և դուրս եկող եկեղեցի: Այն կառուցվել է Ապարանի ջրամբարի ձախ ափին 5-րդ դարի առաջին կեսին: Հաճախ ջուրը ծածկում է այն, բայց պատի վրա գտնվող խաչը երբեք ջրի տակ չի անցնում: Տեղացիների մոտ մի հետաքրքիր ընկալում կա. երբ ջուրը ծածկում է եկեղեցու պատերը, բայց խաչը չի անցնում ջրի տակ, ուրեմն այդ տարին նպաստավոր է լինելու իրենց համար:

Շրջագայությունը շարունակվում է, սակայն մտքերս չեն խաղաղվում. դրանք անընդհատ քչփորում են հուշերիս մատյանը ու ծակծկում հոգիս: Նայում եմ բնության այս գողտրիկ անկյուններին, որ ամեն ինչով հիշեցնում են քոչվոր ցեղերի ձեռքում հայտնված իմ չքնաղ Արցախին, ու հիշում մեծն Շիրազի տողերը.

Հիմա ո՞վ է ձեզ համբուրում,
Ծովասարիս ծաղիկներ,
Ի՞նչ որսկան է ձեզ ցած բերում,
Իմ Սիփանի եղնիկներ:
……..
Ո՞վ է ժողվում անտառներիս
Մեղրագազպե մանանան,
Փարախները թուխ գառներիս
Իրենց տեղը կմնա՞ն…

Անհուն ցավից կծկվում է սիրտս, երբ մտածում եմ, որ սառնորակ աղբյուրներիս

վճիտ ջրերը պղտորում են այդ խաշնարածները…

Մտքով՝ Արցախում, ֆիզիկապես՝ Լոռիում, հասնում ենք «Քարե սնկերին», ու դիտարանից մեր առջև բացվում է մի կախարդական աշխարհ: Հենց այս բարձունքից է Թումանյանը խոսել Աշխարհի հետ: Ն.Հոխիկյանը պատմեց, որ բանաստեղծը շատ է սիրել այս վայրը, քանի որ նրա ստեղծագործական միտքը փայլատակել է հենց այստեղ: Այդ երկնահաս բարձունքից երբ շուրջդ ես նայում, թվում է՝ բարձրաբերձ լեռներն ու լազուր երկինքը այստեղ են համբուրվում…

Քիչ հետո Դսեղում էինք՝ գրողի ծննդավայրում, ուր թանձր մշուշի պես Թումանյանի շունչն էր տիրում: Ամենուր նրա հերոսներն էին, որ արձանացած դիմավորում էին մեզ: Եղանք գրողի տուն-թանգարանում, որի բարեհամբույր աշխատակիցները խնամքով ու ամենայն մանրամասնությամբ ծանոթացրին մեզ նրա հայրական ընտանիքին պատկանող կենցաղային իրերին, սենյակներին կահավորանքին և թանգարանում պահպանված, կյանքի տարբեր փուլերում գրած ստեղծագործություններին: Թումանյանի հայրական տունը թանգարանի է վերածվել 1939 թվականին՝ մեծ գրողի ծննդյան 70-ամյակի առթիվ: Տուն-թանգարանի բակը գեղեցկացնում է Թումանյանի կիսանդրին: Տունն ունի երկու հարկ և վեց սենյակ: Հացատունը, մեծ օջախը և երկու ցուցասրահները գտնվում են առաջին հարկում: Երկրորդ հարկում ցուցադրված են բանաստեղծի մահճակալը, գրասեղանը, հագուստը և մի շարք այլ անձնական իրեր:

Տուն-թանգարանի բակում վեր խոյացող մատուռը իր մեջ ամփոփում է մի սուրբ մասունք՝ Թումանյանի մեծ սիրտը, որը երկար դեգերումներից հետո, ի վերջո, գտավ իր հանգիստը:

Օրվա անցուդարձից պարզվում է, որ այստեղ մշտապես մարդաշատ է լինում, նույնիսկ հերթ, որն էլ խոսում է այն անսահման սիրո մասին, որ ժողովուրդը տածում է իր պաշտելի գրողի հանդեպ:

Վերջին կանգառը Դսեղի «Ծովեր» կոչվող լճի մոտ էր: Լիճը գտնվում էր Դսեղ գյուղից 3կմ հեռավորության վրա՝ ծովի մակերևույթից 1900մ բարձրության վրա: Լիճը կարելի է համարել մշակութային հուշարձան, քանի որ հայ մեծանուն բանաստեղծ Թումանյանը բազում անգամներ անդրադարձել է այս լճին իր ստեղծագործություններում: Լիճը Թումանյանի սիրելի հանդիպման վայրերից էր, որտեղ հաճախ էին գալիս Ավ. Իսահակյանը, Շիրվանզադեն, Վ.Բրյուսովը, Վ.Տերյանը, Լեոն և այլք: Բարձր լեռների արանքում ծվարած այս փոքրիկ լիճը յուրահատուկ գեղեցկություն է հաղորդում Դսեղի լեռնաշխարհին՝ դառնալով բնասերների և զբոսաշրջիկների սիրելի ուղղություն:

Խմբի հետաքրքիր ժամանցը կազմակերպվեց հենց այս լճի ափին: Քանի որ խմբի անդամներից մեկի՝ Կարեն Մադոյանի ծննդյան օրն էր, մեծ շուքով՝ շնորհավորանքներով ու բարի մաղթանքներով կտրվեց նրա ծննդյան տորթը, ու սկսվեց Թումանյանի «ժամը». երգ, արտասանություն, պատմություններ, որին մասնակցեց խմբի անդամների մեծ մասը: Առավել հաճույքով ունկնդրեցինք արցախցի երիտասարդ մանկավարժ Նանար Սիմոնյանի երգն ու ասմունքը, Մարտունի քաղաքի հերոս ազատամարտիկ, «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի ասպետ Սարիբեկ Մարտիրոսյանի այրի Լիլիա Ավանեսյանի արտասանությունը (Թումանյանի «Մարո» պոեմը):

Օրն այնքան էր հագեցած նորություններով ու գեղեցիկ անակնկալներով, որ չէինք հասցնում դասակարգել:

Երեկոյան՝ տուն-դարձին, բոլորիս մի ուրիշ անակնկալ էր սպասում: Վանաձորում բնակվող մեր գաղափարակիցներից մեկը՝ մեծ հայրենասեր Անահիտ Ալոյանը, բոլորիս հյուրընկալության առաջարկ էր արել ու խնդրել՝ չմերժել: Եվ ահա նրանց ընտանիքում ենք: Ընտանիքի անդամները մեծ սիրով ու հարգանքով հյուրընկալեցին մեզ:

Նախկինում ոչ մի շփում չէի ունեցել Անահիտի հետ, սակայն երբ մտանք նրա հյուրընկալ օջախը, և տեսա տան պատին արված մեր պատմական Հայրենիքի ձեռակերտ քարտեզը, այլ բացատրություն թերևս պետք չէր՝ այդ ընտանիքի մասին ամբողջական կարծիք կազմելու համար:

Ծավալված զրույցի ընթացքում համոզվեցի, թե ինչով է շնչում այդ ընտանիքը, համոզվեցի, որ նա հայրենիքի խնդիրներով մտահոգ մի նվիրյալ է, որն անտարբեր չի կարող անցնել հայրենիքում խորացող անարդարությունների կողքով: Այնքան թեժ էին քննարկումները, որ չէինք ուզում բաժանվել:

Շնորհակալ եմ ճակատագրին, որ հնարավորություն ընձեռեց ինձ՝ հանդիպելու ու ճանաչելու նման բացառիկ հայի:

Օրվա շրջագայության խիտ ծրագրով հագեցած՝ բռնեցինք վերադարձի ճանապարհը՝ հոգնածության ոչ մի նշույլ չզգալով: Վերադարձին էլ էր Թումանյանը մեզ հետ. անընդհատ հիշում էինք նրա անմահ ու իմաստուն մտքերը և պարզում, թե ինչքան շռայլ է եղել ժողովրդական այն ակունքը, որից սնվել է գրողը, որքան հարուստ է եղել այն բնօրրանը՝ Դսեղը, որ առատորեն լուսավորել է իր երախտավոր զավակի միտքն ու հոգին:

Իմ կընունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սըրբազան,
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.
Սարը եղավ կընքահայրըս, ցողը՝ մյուռոն կենսավետ,
Ու կընքողըս Նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

Դեռ երկա՜ր, շա՜տ երկար ժամանակ կշարունակվի մեր երկխոսությունը Թումանյանի հետ, քանզի տպավորությունները չափազանց առատ էին ու անմոռաց:

Ինչքան որ Թումանյանին մոտ լինենք, այնքան էլ Մարդ կմնանք…

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ՈՍՏԱՆ

ՄԱԿԱՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

(Հատված «ԱՐՑԱԽ» գրքից)

Այնքան անհոգ եւ անտարբեր ենք, որ չգիտենք թէ ինչ հնութիւններ կան մեր հայրենիքում՝ մեր նախնիքներից մեզ աւանդ մնացած. չգիտենք թէ պատմական փշրանաց ինչ յիշատակարաններ կան թաքնուած մեզ շրջապատող լեռների, ձորերի եւ դաշտերի մէջ. չգիտենք թէ ազգային անցեալ պատմութեան մութ կէտերը լուսաբանող ինչ արձանագրութիւններ կան աւերակ վանքերի եւ անապատների, մատուռների եւ եկեղեցիների, խաչարձանների եւ տապանաքարերի վերայ եւ մագաղաթեայ գրչագիրների յիշատակարաններում: Մեր անտարբերութիւնից օգուտ են քաղում օտարներն:

Մէն մի հայրենի նահանգ հետազօտելն անկ է ընկերութեանց եւ հարուստ անձանց, որպէս զի կարողանան նիւթականի ուժով՝ մասնագէտ, հմուտ անձանց եւ ականաւոր լուսանկար[իչ]ների ձեռնով ի լոյս հանել նախնական ամէն մի հնութիւն եւ արձանագրութիւն իւրեանց իսկական ոճով եւ ձեւերով: Սակայն տեսնելով, որ ժամանակի անողոք ճիրաններն լափում ու եղծում են մեր թանկագին հայրենիքի -Արցախի -ամէնապատուական հնութիւնները եւ արձանագրութիւնները. տեսնելով, որ տգէտ եւ թշնամի ձեռներ քանդում, աւերում եւ ոչնչացնում են հայրենի սրբազան աւանդները. տեսնելով, որ ցեցերն կրծում եւ անյայտացնում են անգին ձեռագիրների յիշատակարաններում եղած պատմական մարգարիտները եւ խոնաւութիւնն ու անհոգութիւնը կլանում են պատմական ակունքները. վերջապէս տեսնելով, որ ընկերութիւններն եւ հարուստներն ցարդ չձեռնարկեցին Արցախի հետազօտութեան գործին, վասն որոյ պարտք համարեցի սիրով կրել ամէն նեղութիւն, աղքատօրէն հետազօտել, գէթ ազատել մնացեալ յիշատակարանները աւերիչ ձեռքերից, ցեցերից եւ խոնաւութիւնից եւ ժամանակի ճիրաններից եւ գոնէ կազմել մի ուղեցոյց՝ ապագայ հմուտ մասնագէտների համար: Զոր օրինակ մեղուն ծաղկից ծաղիկ ոստոստելով հաւաքում է ծաղկանց ընտիր հիւթերը եւ կազմում պատուական մեղր. նոյնպէս շրջելով գաւառից գաւառ, գիւղից գիւղ, աւերակից աւերակ եւ սարից դաշտ՝ կազմեցի «Արցախ»ը:

Գործիս մէջ յանկէ յանուանէ նշանակեցի Արցախեան նահանգի նախկին եւ փոփոխեալ սահմանագլուխները եւ սոցա մէջ գտնուած լեռները եւ լեռնակները, դաշտերը եւ դաշտակները, գետերը եւ գետակները, մեծ-աղբիւրները եւ լճակները, նաւթահանքը եւ հանքային ջուրերը, ոսկու եւ արծաթի, պղնձի եւ շիպի, երկաթի եւ պողպատի, երկանաքարի եւ շինութեանց քարերի հանքերը, քարայրերը եւ վիմափորները, անտառները եւ մացառները, պտղատու եւ անպտուղ ծառերի եւ թփերի տեսակների անունները: Երկասիրութեանս մէջ զետեղեցի ինքնաբոյս եւ ցանուած ծանօթ բանջարեղինաց եւ կանաչեղինաց, ծաղիկների եւ խոտերի, ընտանի անասնոց եւ գրաստուց, սուրբ եւ անսուրբ կենդանեաց եւ գազանաց, բնիկ եւ երթեւեկ հաւքերի, սողունների եւ զեռունների, օձերի եւ միջատների, ճանճերի եւ մժղուկների եւ միանգամայն տեղական բերքերի տեսակների անունները (տեղ-տեղ տեղական բարբառով):

Ըստ չափու ձեռնահասութեանս որոշակի նշանակեցի Ուտիական եւ Արցախական բոլոր գաւառների սահմանները [1] բացի մի քանի գաւառների միջնասահման գծերից, զորս անհնարին եղաւ ճշտիւ որոշել, վասն զի չկային միջնագիծ սահմանները որոշող բնական նշաններ, ինչպէս են գետեր, ձորեր, լեռներ եւայլն: Իսկ մնացեալ բոլոր գաւառների չորս սահմանագլուխները որոշելուց յետոյ՝ կարգաւ նշանակեցի նոյն չորս սահմանների միջեւ գտնուած շէն, կիսաւեր եւ աւերակ քաղաքների եւ գիւղերի, վանքերի եւ անապատների, մատուռների եւ բեմերի, բերդերի եւ դղեակների տեղը, դիրքը, անունները, բնակչաց ծխաթիւը, արականաց եւ իգականաց որքանութիւնը, քահանայից եւ եկեղեցեաց քանակութիւնը, միամեայ ծնելոց, պսակելոց եւ ննջեցելոց թիւերը, վարելահողերի եւ պտղաբերութեանց աստիճանները, օդի, կլիմայի եւ ջրի յատկութիւնները եւ ամէնից երկար ապրողի տարեթիւը:

Համառօտ ծանօթութիւնները գրեցի մէն մի երեսի ստորոտում, իսկ ընդարձակները՝ գրքիս վերջում, ուր առանձին-առանձին զետեղուած են նաեւ բոլոր յատուկ անուանց, շէն եւ աւերակ քաղաքների, գիւղաքաղաքների, գիւղերի, վանքերի եւ բերդերի ցանկերն եւս: Այս ամէնը յայտնելուց յետոյ յայտնում եմ նաեւ.

Ա. Հետազօտութեանց ժամանակ ո՛չ կռատանց հետք գտայ եւ ո՛չ մեհեանների, ո՛չ Արցախական եւ ո՛չ Ուտիական նահանգներում: Միայն գտայ, որ կռապաշտ դարերի ընթացքում ամփոփուած են ննջեցեալներն չորս ձեւով.

Նախ՝ ահագին, խեցեղէն կարասներում:

Երկրորդ՝ երեք ահագին քարերի տակ՝ կռնկի վերայ երկարցրած:

Երրորդ՝ մեծ-մեծ քարերի տակ նստեցրած դիրքով:

Չորրորդ՝ աւազանանման վիմափոր տապաններում, որք ունին եւ կափարիչ քարեր: Իւրաքանչիւր ամփոփեալ, թէ՛ արական եւ թէ՛ իգական, իւր հետ ունի գերեզմանում իւր զէնքերը եւ զարդերը: Բացի իգականաց զարդերից լինում են խեցեղէն պուլիկներով լի ուլունքներ:

Բ. Մի մղոնը գործածած եմ 7 վերստի տեղ, այլապէս 7 վերստն հաւասար է մի մղոնի:

Գ. Չափելու համար գործածած եմ մետր չափը, որովհետեւ գրեթէ ընդհանրացած է չափս ամէնուրեք:

Դ. Անխտիր չափած չեմ բոլոր վանքերի, եկեղեցիների եւ բերդերի երկարութիւնները եւ լայնութիւնները, այլ միայն չափած եմ հարկ համարածներս:

Ե. Գործածեցի ժողովրդական սեռ բառը, որ կարճ գեղեցիկ եւ իսկական իմաստը յայտնող է եւ որ նշանակում է լեռների եւ լեռնակների թրաձեւ երկարած գագաթնագիծը: Ըստ մեր կարծեաց, սեռ արմատիս հետ բարդուած է շարականի սեռակնաձեւ սեռ-ակն-ձեւ բառն. այսպէս է եւ ճախարակի իլկի լիսեռն, լի-սեռ բառն:

Զ. Առանց ձանձրանալու ընդօրինակեցի բոլոր գրչագիրների յիշատակարաններից (արժան համարուած) հատուածներ եւ պատմական հետաքրքիր կտորներ եւ վանքերի, եկեղեցիների, անապատների, մատուռների, ապարանների, խաչարձանների, մասունքների, եւ մահարձանների արձանագրութիւնները, մանաւանդ՝ պատմականները:

Է. Արցախեան ջրերից գետ անուանեցի միայն Թարթառը, Հակարին եւ Աղստեւը, իսկ գետակ եւ վտակ՝ մնացեալ ջուրերը, քանզի ամբողջ ամառ եղանակներում չեն հասնում Կուր գետին:

Ը. Համարեա թէ շատ լեռների, լեռնակների, բլուրների, բլրակների եւ սեռերի վերայ արձանացած են վաղեմի, քարեայ, անպաճուճ եւ անարձանագիր խաչեր: Այս անխօս խաչարձանների մասին աւանդութիւնն ասում է. Մի մասն տնկուած է Ս. Գրիգոր Լուսաւորչի հրամանաւ, մի մասն՝ Ս. Գրիգորիսի եւ միւսն՝ Ս. Մեսրովպի:

Թ. Հնարաւոր եղածին չափ նշանակեցի ուսումնարանաց անունները, թիւը, աշակերտաց որքանութիւնը եւ դրամական մտից եւ ելից քանակութիւնը:

Ժ. Արցախեան մէն մի գաւառ ունեցած է իւր սեպհական վանքը եւ իւր առանձին գաւառական առաջնորդը միաբաններով հանդերձ, որ նստելով իւր իսկ վանքում հովուած է նոյն գաւառի բանաւոր հօտը, օրինակ Դիզակ գաւառն իբրեւ եպիսկոպոսարան նախ ունեցած է Դիզափայտ վանքը, ապա՝ Կաւաք, ապա՝ Գտիչ եւ յետոյ՝ Սպիտակ-Խաչ վանքը. Վարանդան՝ Ամարասը եւ Հիրհերի տաճարը եւ երբեմն՝ Քոչիզի շինութիւնը. Խաչենն՝ Մեծ-արանց կամ Մեծ-իրանաց վանքը եւ Մայրաքաղաք, Ըռստակ գաւառն՝ Դատի վանքը, Ջրաբերդն՝ Ջրվշտկի կամ Եղիշ-առաքեալի վանքը, Մեծ-Կողմանք կամ Կիւլստանն՝ նախ Հոռեկայ եւ ապա Ամէնափրկիչ վանքերը, Գարդմանն նախ Մլզնաբերդ եւ յետոյ Թարգմանչաց վանքերը, Փառիսոսն՝ նախ Փառիսոսի, ապա Խորանաշատի եւ յետոյ Չարեքայ վանքերը, Քուստի կամ Քաւս գաւառն՝ Շխմուրատայ եւ Վարագայ վանքերը, եւայլն, եւայլն: Դեռ 1828-ին շէն եւ պայծառ եղած են վանքերս, ինչպէս վկայում են ականատեսներն: 1764 թուին հետեւեալ վանքերում գահակալում էին Աղուանից հետեւեալ եպիսկոպոսներն.

Մելքիսեթ արքեպիսկոպոս առաջնորդ Եղիշ-առաքեալի,

Ազարիա եպիսկոպոս ,, Հոռեկայ,

Զաքարիա եպիսկոպոս ,, Գանձակի,

Իսրայէլ արքեպիսկոպոս ,, Թարգմանաց,

Օհաննէս ,, ,, Փառիսոսի վանից:

Բայց յայտնի է, թէ Աղուանից կաթուղիկոսութեան մահից յետոյ, այս է 1828 թուականից յետոյ վանքերն հետզհետէ սկսած են զրկուիլ եւ անզաւականալ միաբանական խմբերից եւ անխնամ մնալով քայքայուիլ մեծ մասամբ: Լուսահոգի Բաղդասար մետրապօլտի կենդանութեան ժամանակ շէն եւ պայծառ տեսած եմ Եղիշ-առաքեալը, Ինն մասը, Գանձասարը, Ս. Յակովբը, Պտկեսբերգը, Ամարասը, Գտիչը եւ Սպիտակ-Խաչը եւ Ղեւոնդեանց անապատը վանահայրերով, միաբաններով եւ ուսումնարաններով:

Զոր օրինակ քաղաքական բուռն հոսանքներից ստիպեալ տեղից տեղ փոխարդուած է յաճախակի Հայոց ընդհանրական վեհարանն, նոյնպէս ստէպ-ստէպ տեղից տեղ փոխադրուած է եւ Աղուանից կաթուղիկոսարանն, որ հաստատուած է

ա. Դարբանդ կամ Չողա.

բ. Գիս (ըստ աւանդութեան).

գ. Պարտաւ

դ. Կթղղկոսարան (Դոնի շինի հանդէպ).

ե. Եղիշ-առաքեալ կամ Ջրվշտիկ

զ. Գանձակ,

է Քարահերձ

ը. Խամշի վանք,

թ. Հաղբատ.

ժ. Գանձասար

ժա. Ջալէթ

ժբ. Վերստին Գանձասար, ուր եւ վախճանուած է կաթուղիկոսութիւնն Աղուանից եւ թաղուած վերջին Սարգիս կաթուղիկոս Ջալալեանցը: Աղուանից կաթուղիկոսների մասին գրելու եմ «Աղուանից պատմութեան» մէջ եւ ոչ այստեղ:

ԺԱ. Որովհետեւ արդէն գրած եմ «Աղ. երկ. եւ Դրացիք» գրքում, վասն որոյ աւելորդ համարեցի գրել Արցախի կրօնական եւ քաղաքական կենաց մասին եւ գիւղական հիւանդութիւնների եւ բժշկութիւնների եւ կերակուրների մասին, որք գրեթէ նոյն են ամէնայն մասամբ, միայն Արցախն չունի խնկալ կերակուրը:

ԺԲ. Հող. գրեթէ առհասարակ ջրարբի, բազմարդիւն (այժմ բացի Մուղանի դաշտից) եւ գաճային են ամբողջ դաշտային գաւառների հողերն, որովք վարձատրուում են երկրագործներն եւ հովիւներն եւ անասնապահներն առատագոյն ցորենով, գարիով, բոժոժով, բամբակով, ամէնատեսակ ազնիւ պտուղներով, ազնիւ ոչխարով, տաւարով, գոմէշով, ձիով եւ ուղտով: Միջակ արդիւնաւէտ եւ անջրդի են Դիզակի, Վարանդայի եւ Բերդաձորի հողերն, նուազ արդիւնաբեր՝ Խաչենի, Հարճլանքի, Վակունիսի, Ծարի, Ըռստակի, Ջրաբերդի, Կիւլստանի, Գարդմանի, Փառիսոսի, Քաւսի եւ Ջաւէի վերնամասի հողերն:

ԺԳ. Ջուր. Համարեա՛ թէ ընդհանրապէս առատ, ամէնապատուական եւ վճիտ են Արցախի բոլոր գաւառների ջուրերն եւ միանգամայն ականաբուղխ. իսկ դաշտայինն (Ուտիական նահանգինն) առհասարակ գետերի, գետակների, առուների եւ առուակների եւ ուրեք-ուրեք ջրհորի ջուրեր են, որք լինում են յաճախակի պղտոր եւ անախորժ, սակայն ոչ վատառողջ:

ԺԴ. Որթ. Բացի Գանձակի որթից, որ ջրարբի է, սակայն հեծած չէ ծառի վերայ, դաշտային բոլոր որթերն (այգիներն) ամբողջապէս ջրարբի են եւ բարձրացած ծառերի վերայ. Արցախեան գաւառներինն ընդհանրապէս անջրդի են, որոց մատերը (ծայրերը) ամէն գարնան յապաւում են եւ կապոտում մարդաչափ բարձրութեամբ ցցած սարու (ձողերի) վերայ, ինչպէս եւ Գանձակինն:

ԺԵ. Հագուստ. թէ՛ արականաց եւ թէ՛ իգականաց զգեստներն ունին իւրեանց յատուկ ձեւը, զորս տեսած կը լինի ամէն ոք, քանզի համարեա, թէ ամէնուրեք գտնւում են արցախեցիներ: Սակայն հարկ է յայտնել, թէ մի քանի տարիներից վեր մուտ գործած են Արցախ Թիֆլիսի եւ Եւրոպայի սեպհական արականաց եւ իգականաց զգեստների ձեւերն:

ԺԶ. Բնակարան. Գաւառներում տակաւին ամէնամեծ մասամբ գետնափոր են բնակարանները եւ անշուք. բայց նոր »ի նորոյ սկսած են շինել եւ երկյարկանի գեղեցիկ բնակարաններ: Ամէնամեծ մասամբ գեղեցկաշէն են քաղաքների բնակարաններն:

ԺԷ. Վանքեր, մատուռներ եւ բեմեր. Կարծում եմ, թէ ոչ մի նահանգ այնպէս հարուստ չէ այսպիսի սրբավայրերով եւ ուխտատեղիներով, ինչպէս Արցախեան նահանգն. բայց եւ այնպէս ոչ մի նահանգի վանքեր, անապատներ եւ ուխտատեղիներ այնպէս բոլորովին զրկուած չեն իւրեանց բարոյական եւ նիւթական փառքերից, ինչպէս Արցախեան վանքերն եւ սրբավայրերն:

ԺԸ. Ցրուած եւ գերուած հայեր. բոլորովին զարմանում եւ սրտաճմլիկ դրութեան մէջ է ընկնում հետազօտող հայն, երբ տեսնում է միլիոնաւոր հայ բնակիչներով հարուստ Արցախն իսպառ դատարկուած: Այո՛, դատարկուած են իւրեանց հայ եւ հայադաւան բնակիչներից Պիան, Մուղան, Վարդանակերտ, Արանռոտ, Տրի, Ռոցպատեան, Աղուէ, Տուչքատակ, Ուտի-առանձնակ, Շիկաշէն, Կողթ, Բերդաձոր, Հարճլանք, Վակունիս, Ծար եւ Ըռստակ գաւառներն. իսկ կիսով չափ կամ ամէնամեծ մասամբ դատարկուած են Գարդման, Փառիսոս, Քաւս կամ Քուստի, Ջաւէ, Ջրաբերդ, Խաչեն, Վարանդայ եւ Դիզակ գաւառներն: Ի՞նչ եղան սոցա հայ բնակիչներն: Մի մասն կերակուր եղաւ 1798-1799 թուի սովին եւ ժանտախտին. մի մասն գերի գնաց Պարսկաստան, մի մասն գաղթեց Տաճկահայաստան, մի մասն՝ Պարսկաստան, մի մասն՝ Շաքի եւ Շամախի, մի մասն՝ Կախեթ եւ Վրաստան, մի մասն՝ Բագու, Ղուբա, Դարբանդ եւ Ռուսիա: Տասնից մին հազիւ մնացած է այսօր:

ԺԹ. Օտար ցեղեր. Դաշտային գաւառներում բնակում են այժմ արաբ, սուննու եւ շիա մահմետականներ, որք առհասարակ երթեւեկում են ամարանոց եւ ձմերանոց եւ տարուայ մեծ մասը անցուցանում են թաղիքեայ վրաններում: Թաթարաց ցեղից մնացորդներն բնակում են Ջական կայարանից վերեւ համանուն գետակի հովիտներում: Մարաց ցեղից քուրդեր բնակում են Ծար, Վակունիս, Հարճլանք եւ Բերդաձոր գաւառներում, իսկ Քոլանի կոչուած ցեղն՝ Ըռստակ գաւառում: Սոքա առհասարակ յետոյ մուտ գործած են:

Ի. Արտահանութիւն. Նահանգս արտահանում է ցորեն, գարի, բոժոժ, բամբակ, բուրդ, բրինձ, լուբիայ բակլայ, սոխ, սխտոր, գետնախնձոր, ստեպղին, ճակնդեղ, ձմերուկ, սեխ, վարունկ, խաղող, գինի, օղի, ընկուզ, իւղ, պանիր, մեղր, կով, եզն, գոմէշ, ոչխար, այծ, խոզ, ձի, ջորի, ուղտ, արջենի, աղուէսենի, ընձենի, գայլենի, սամուր (ղէլէ) գոմէշենի, տաւարի, ոչխարի, ձիու, ջորու, խոզի կաշիներ եւ մորթիներ, պատուական գորգ, կարպետ, մափռաշ, խուրջին, ջրաղացաքար, տապանաքար, ձուկն, ձկնհաւկիթ եւ ձկնապուխտ:

ԻԱ. Շրջագայութեանս ժամանակ կրեցի մեծ նեղութիւն. երեք անգամ ազատուեցայ արիւնարբու աւազակաց ձեռքն ընկնելուց, երեք անգամ ձիու տակ մնացի վտանգաւոր տեղերում, այս է՝ սահեցաւ ձիու ոտքերն, ընկաւ ուժգնակի գետնին եւ ես մնացի ձիու ներքեւ. երեք օր մնացի անսուաղ Ծար գաւառում հաց չգտնելու պատճառաւ:

ԻԲ. Այս ամէնը յայտնելուց յետոյ, յայտնում եմ հրապարակաւ իմ երախտագիտութեան խորին յարգանքը եւ ջերմ շնորհակալութիւնը այն ամէն վարդապետ, քահանայ արժ. եղբարց, վարժապետ, երիտասարդ, պատանի սիրելեաց, ազնիւ տանուտեարց, որք անձնուիրաբար օժանդակեցին ինձ այս ծանրագոյն գործում, որոց վասն մնամ միշտ աղօթարար:

Մակար եպիս. Բարխուտարեանց

---

[1] Գաւառների սահմանագծերը որոշելու համար՝ հնարաւոր զգուշութեամբ հետեւած եմ պատմութեանց, վանքերի արձանագրութեանց, մի քանի ձեռագիր աւետարանների յիշատակարաններին Աղուանից կաթուղիկոսներին տուած շահական հրովարտակներին, էջմիածնի եւ Աղուանից կաթուղիկոսների կոնդակներին մատնանիշ արած սահմանագծերին եւ բազմադարեան յարատեւած աւանդութեանց կանոնի զօրութիւն ստացած տրամադրութեանց:

«ՌՈՒԶԱՆ»-Ը՝ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԲԵՄՈՒՄ

Երբ ծագում է մեզ արևը լուսավոր,
Հայ տղաներ, սթափեցեք ձեր քնից,
Լծեք եզինք, առեք գութանն ու արոր
Եվ փութացեք դաշտը հերկել ցողալից:
Իսկ երբ հեռվից մեր թշնամին երևի,
Հայ տղաներ, թողեք արորն ու եզինք,
Հարձակվեցեք թշնամու դեմ կատաղի,
Կռվեցեք քաջ և փրկեցեք հայրենիք:

Հայաստանի թատերական գործիչների միության (ՀԹԳՄ) և Մոսկվայում գործող «Դիալոգ» հասարակական կազմակերպության աջակցությամբ Երևանում վերակազմավորվել ու գործում է Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը (գեղարվեստական ղեկավար՝ Ռուզան Խաչատրյան): 2025թ. օգոստոսի 19-ին նշված կառույցների ղեկավարները կնքեցին պայմանագիր՝ աջակցելու Ստեփանակերտի թատրոնին: Դրանից հետո Ստեփանակերտի պետական թատրոնը՝ Ռ. Խաչատրյանի ղեկավարությամբ, երևանյան տարբեր բեմերում մի քանի անգամ ներկայացրել է Ալեքսանդր Մանասյանի «Արցախյան սիրո հեքիաթ կամ Արա, պա ստի պեն կինի՞» ստեղծագործությունը՝ Արցախի բարբառով: Մի քանի ամիս է, ինչ թատրոնը պատրաստվում էր բեմականացնելու Մուրացանի «Ռուզան կամ հայրենասեր օրիորդ» պատմական դրաման, որն արդիական է նաև այսօր: Հունիսի 28-ին վերջապես կայացավ թատերախմբի աշխատանքի արդյունքը. Երևանում՝ Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնի բեմում, ներկայացվեց «Ռուզան»-ը, որի դեպքերը տեղի են ունենում մոնղոլ-թաթարական արշավանքների ժամանակ Արցախում 13-րդ դարում: Այս կարևոր միջոցառմանը ներկա լինելու համար Մոսկվայից Երևան էր եկել «Դիալոգ» ՀԿ հիմնադիր ու նախագահ Յուրի Նավոյանը: Ներկա էր նաև ՀԹԳՄ նախագահ Հակոբ Ղազանչյանը: Դրամայի հիմքում հայրենասիրությունն է: Գործողությունների հիմնական մասը տեղի են ունենում Արցախի իշխանաց իշխան Հասան Ջալալ Դոլայի ամրոցում ու պալատում: Բոլոր ժամանակներում էլ անձնական շահի, վրեժխնդրության և այլ պատճառներով լինում են հայրենիքը դավաճանողներ, և որի արդյունքում մեծ դժբախտության է ենթարկվում հատկապես անմեղ ժողովուրդը: Չգրված օրենքի համաձայն՝ դավաճանին պատժում է հենց նրա ծառայությունից օգտված թշնամին: Այսպես էլ «Ռուզան» դրամայում է: Իշխան Համտունը (դերում՝ Սամվել Սարգսյան), չհասնելով իր նպատակին՝ ամուսնանալ Արցախի իշխանաց իշխանի դստեր՝ Ռուզանի հետ, նախանձելով հերոս իշխան Ներսեհին, իր ծառայությունն է մատուցում թաթարաց զորապետ Ջոլային: Ռուզանի և Ներսեհի հարսանիքի օրը գուժկանը պատերազմի լուր է բերում պալատ: Համտունը թշնամուն տեղեկացրել էր Հասան Ջալալի ամրոցի զորքի, ինչպես նաև իշխանի գեղանի դստեր մասին:

ՀԱՄՏՈՒՆ.- (Բուրային) Ջալալի գանձերի մեջ, տեր Նուին, դուք, արդարև, չեք գտնիլ այնպիսի մի հազվագյուտ բան, որից հարուստ Թաթարստանը չունենար, բայց յուր սնդուկներից դուրս նա ունի մի այնպիսի գանձ, որի նմանը, արդարև, մեծ Թաթարստանը չունի. և արժե, տե՛ր, որ այդ գանձը դո՛ւ ունենաս:

ՋՈԼԱ.- (հետաքրքրությամբ) Ինչպիսի՞ գանձ է այդ:

ՀԱՄՏՈՒՆ.- Մի աղջիկ, որ հրեշտակից ավելի գեղեցիկ է և արշալույսից ավելի հրաշալի:

ԲՈՒՐԱ.- (ոգևորված) Այդ գեղեցկուհին իմը կլինի: Եթե բոլոր աշխարհն անգամ ինձ ընդդիմանա, այսուամենայնիվ, ես նրան կառնեմ: (Դառնալով դեպի Ջոլան) Հորեղբայր, ի՞նչ կասեիր, եթե ես իմ հոր՝ Չարմաղանի կողմից հրամայեի բերդի պաշարումը վերցնել և Ջալալ իշխանի դուստրը ինձ կնության առնելով՝ բարեկամություն հաստատեի նրա հետ և մեր զորքերը նրա երկրից հանեի:

Այս դրվագներից հետո թաթարաց զորապետի եղբոր որդին՝ Բուրա-Նուին (դերում՝ Լևոն Այվազյան), իրենց մոտ բազում նվերներով բանակցության եկած Հասան-Ջալալի ավագ եղբորը՝ Զաքարեին (դերում՝ Մարատ Դավթյան)՝ իր պահանջն է ներկայացնում՝ ամուսնանա Ռուզանի հետ: Ասում է՝ միայն այդ դեպքում է պատրաստ ազատ արձակել հազարավոր գերյալներին: Պարզ է՝ Ռուզանի հայրը, նշանածը, հարսանիքի առիթով հյուր եկած հայոց տարբեր վայրերից հյուր եկած իշխանները՝ Պապաքը, Սմբատը, իշխանի կինը՝ Մամքանը, այլք դեմ են, որ Ռուզանն ամուսնանա թշնամու զորավարի հետ: Սակայն հազարավոր հայրենակիցների կյանքը փրկելու համար Ռուզանը՝ իր նաժիստի օգնությամբ, գիշերով գաղտնի հեռանում է պալատից և հասնում թշնամու բանակ: Հայոց էպոսածին Ծովինարի նման Ռուզանն էլ իր պայմաններն է առաջ քաշում, որ թաթար զորավարն ազատ արձակի հայ գերիներին, բանակը հեռացնի հոր ամրոցից, գլխատի դավաճան Համտունին և այլ հայրենանվեր առաջարկներ: Սիրահարված թաթար զորավարը կատարում է Ռուզանի բոլոր պայմանները: Բայց Արցախի դուստրը ինքնազոհությունն առավել է ընդունում, քան ամուսնանալ թաթարի հետ. թույն է ընդունում: Նույն ժամանակ հայոց զորքերը հաղթում են թշնամուն, Ներսեհը գտնում է նշանածին, սակայն արդեն ուշ էր: Ներկայացման ամբողջ ընթացքում հանդիսատեսը լարված հետևում էր դերասանների խաղին: Ճանաչված ու փորձառու դերասանների հետ խաղում էին նաև երիտասարդները, այդ թվում նաև՝ «Գալյա Նովենց» թատերական դպրոցի Արցախի կուրսի ուսանողները: Ռուզանի դերում հրաշալի խաղաց երիտասարդ Շողեր Սարգսյանը: Վերջերս «Դիալոգ»-ի երևանյան մշակութային կենտրոնում տեղի ունեցավ «Գալյա Նովենց» թատերական դպրոցի Արցախի կուրսի ուսանողների հանդիպումը Յու. Նավոյանի և Հ. Ղազանչյանի հետ: Նույն դպրոցի Արցախի խմբի երկրորդ կուրս փոխադրված Շողերը, որը ինչ-որ ժամանակ կորցրել էր հույսը տուն՝ Արցախ վերադառնալու առումով, ասաց՝ թատրոնի շնորհիվ հավատում է՝ որպես կայացած դերասանուհի, մի օր իրենց խմբով խաղալու են Արցախի բեմում: Իսկ Ռուզանի դերում խաղալն առավել իրատեսական է դարձնում շնորհալի դերասանուհու երազանքը: Իշխան Հասան-Ջալալի դերում հանդես է գալիս Հայաստանի վաստակավոր արտիստ Շանթ Հովհաննիսյանը: Թաթարաց զորապետ Ջոլայիի դերում տարբեր ֆիլմերում խաղացած Սարգիս Գրիգորյանն է: Մեծ պատասխանատվությամբ ու սիրով հանդես եկան բոլոր դերասանները, որն էլ նրանց խաղը դարձրեց հրաշալի, ոգևորիչ, հուզող: Բացի դերասանների խաղից արժանին պետք է ասել նաև նկարչական ձևավորող Անտոն Քեշիշյանին և զգեստների ձևավորող Մարինե Թադևոսյանին:

«Ռուզան» ներկայացումը նույն բեմում կայացավ նաև հունիսի 29-ին: Ինչպես միշտ, այս անգամ էլ դահլիճում շատ էին արցախցիները, որ մշտապես հայրենի տան կարոտով են միմյանց հանդիպում: Ներկայացման վերջում թատրոնի գեղարվեստական ղեկավար ու դրամայի բեմադրիչ Ռ. Խաչատրյանը հուզված նշեց՝ վերջապես իրականացավ իր ու թատերախմբի երազանքը՝ ներկայացնել Մուրացանի «Ռուզան»-ը: Շնորհակալություն հայտնեց հանդիսատեսին, աջակիցներին: Առանձնակի երախտագիտություն հայտնեց Հ. Ղազանչյանին ու Յու. Նավոյանին, որոնք մեծ հավատով աջակցեցին իրենց:

Արդեն ավանդույթի համաձայն, երբ երևանյան բեմերում տեղի են ունենում «Դիալոգ»-ի աջակցությամբ ՀՀ-ում վերակազմավորված արցախյան մշակութային խմբերի ելույթներ, զուգահեռ միջանցքներում կազմակերպվում են դարձյալ արցախցիների ձեռքի աշխատանքների և այլ ապրանքների ցուցահանդես-վաճառքներ:

«ՀԱՐԵՎԱՆՆԵՐ» ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱԽԱՂԸ

Հուլիսի 23-ին Երևանում՝ «Դիալոգ» կազմակերպության մշակութային կենտրոնում, առաջին անգամ ներկայացվեց Թբիլիսիի «Օբվոդնի պերեուլոկ» թատերական ստուդիայի «Հարևաններ» կատակերգական պիեսը,

որի հեղինակն է Արտյոմ Գրիգորենցը: Ներկա էին Մոսկվայում գործող «Դիալոգ» ՀԿ հիմնադիր ու նախագահ Յուրի Նավոյանը, որի աջակցությամբ էլ կայացավ պիեսի ներկայացումը, Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանը, մշակութային գործիչներ, թատերասերներ, հյուրեր: Ներկաներին ողջունեց Ա. Գրիգորենցը՝ կարևորելով այն, որ թբիլիսյան թատրոնը հանդես է գալիս Երևանում: Շնորհակալություն հայտնեց Յու. Նավոյանին, ներկաներին: Բեմում հանդես եկան Դաիլդա Լետոդիանին, Իրինա Գրիգորյանը և Ալեքսեյ Բախոլդինը: Ներկայացումը բեմադրել է հեղինակը՝ ժողովրդական թատրոնի ձևաչափով, իր մասնավոր թբիլիսյան «Օբվոդնի պերեուլոկ» թատերական ստուդիայում, որը գտնվում է Թբիլիսիի պատմական թաղամասում՝ հայ դասական գրող Նար-Դոսի բնակարանի հարևանությամբ: Նար-Դոսի հետ ընկերություն է արել Ա. Գրիգորենցի պապը: «Դիալոգ»-ի

տեղեկությամբ՝ հայտնի է, որ Թիֆլիսում (Թբիլիսի), որպես Ռուսական կայսրության Կովկասի վարչական կենտրոն, XIX դարի սկզբից բուռն զարգացում էր ապրում հայկական մշակույթը, որի անբաժանելի մասն են այստեղ ձևավորված հայկական թատերական ավանդույթները: Արտյոմ Գրիգորենցը և նրա բազմազգ թիմը այդ հարուստ ժառանգության կրողներն են և իրենց գործունեությամբ ակտիվորեն զարգացնում են միջմշակութային երկխոսությունը: Արդի թեմաներով երգիծական պիեսում հարևաններն են. տարբեր առիթներով վիճում են, սակայն միշտ էլ գտնում են նաև երկխոսելու, միմյանց նկատմամբ բարի լինելու ձևեր, առիթներ: Օրինակ՝ վեճի առիթ է դառնում կոշկակարի շունը, որի բարձր հաչոցը խանգարում է հարևանուհուն: Վերջինս առաջարկում է շան փոխարեն ակվարիումով ձուկ պահել, որը հանդարտեցնում է նյարդերը: Հանդես է գալիս նաև կենցաղսպասարկման՝ տվյալ դեպքում գազի գրասենյակի ներկայացուցիչ-տեսուչը՝ իր «բարձրությամբ»: Արտաքուստ թեթև լինելու հետևում թաքնված են փոխըմբռնման և մարդկային հաղորդակցության իմաստի վերաբերյալ խոր փիլիսոփայական մտորումներ:

Հյուրերի այցը Երևան կարևորեցին Յու. Նավոյանը և Հ. Ղազանչյանը: Նման միջոցառումները նաև կարող են լինել երկխոսություն հայ և վրաց, նաև այլ ժողովուրդների միջև, բարեկամական կապ: «Դիալոգ» կազմակերպության կարևոր առաքելություններից մեկն էլ ժողովուրդների բարեկամությունն է: Նշեմ՝ «Դիալոգ»-ի աջակցությամբ այսօր Երևանում վերակազմավորվել ու գործում են արցախյան մի քանի մշակութային խմբեր, որոնց ներկայացուցիչները նույնպես ներկա էին դահլիճում, տպագրվում են գրքեր:

ՉՓԱԿՎՈՂ ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԵՐԿՐԻ ԿԱՐՈՏՈՎ ՈՒ ՀԱՎԱՏՈՎ

«Սարից այն կողմ»-ն ուղերձ է սերունդներին Արցախը չմոռանալու և այն հետ վերադարձնելու մասին:
Վալյա Գոքոյան-Կաժոյան

Հուլիսի 1-ին Երևանի Հովի. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնի բեմում արցախցի դերասաններն էին: «Սարից այն կողմ» մեկ գործողությամբ դրաման Արցախյան 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված 44-օրյա պատերազմից հետո Ստեփանակերտում բնակվող մեր հայրենակիցների մասին է: Ցանկացած արցախցի իրեն կգտնի դրամայի հերոսների կերպարում: Պիեսի հեղինակ ու բեմադրիչ, ամերիկահայ ռեժիսոր Կարինե Քոչարյանի հերոսներն ունեն իրենց իրական նախատիպերը, որոնց հանդիպել է հեղինակը, ծանոթացել նրանց պատմությանը: Հայոց շվիի (երաժիշտ՝ Գագիկ Ադամյան) քաղցր ձայնը կարոտ է հիշեցնում. կարոտ՝ կորսված հայրենի հողի, կարոտ՝ անմահության ճամփան բռնած հերոսների... Եվ այս հնչյունների տակ բեմում արցախցի դպրոցականներ են՝ Աստղիկն ու Տիգրանը, որոնք ունեն հերոսաբար նահատակված ծնողներ, հարազատ, բարեկամ: Իսկ Արցախյան առաջին և վերջին պատերազմներում գրեթե բոլոր տղամարդիկ էին մասնակցել, ու շատ ընտանիքներում կային Անմահ հերոսին, հերոսներին նվիրված անկյուններ: Տիգրանը, որի հայրը՝ նկարիչ ու բանաստեղծ Ավոն (դերում՝ Մարատ Դավթյան) 1990-ականներին վիրավորվել ու գամված է սայլակին, իսկ մայրը մահացել է քաղցկեղից, հարուստ գիտելիքներ ունի եւ սիրում է Աստղիկին: Ինքն ու հայրը մնացել են Շուշան տատի խնամքին: Արցախցի՝ իր ընտանիքին, բնակավայրին նվիրված ու խորհրդատու տատի-բաբոյի դերում խաղում է Ռուզան Գասպարյանը: Աստղիկի հայրը հերոս է՝ անմահացած Արցախյան առաջին պատերազմում: Մայրն էլ է մահացել, և Աստղիկը խանութպան պապի՝ Վաղոյի (դերում՝ Սամվել Եվրիյան-Արցախի վաստակավոր արտիստ) խնամքին է: Երիտասարդ սերնդի այս ներկայացուցիչները հպարտ են իրենց հերոս հայրերով, հայրենիքով: Բայց այլ է իրողությունը. գնալով սեղմվում է օղակը: Անհայտ է մնում Արցախի ապագան: Երկար ժամանակ հույսով նշանածին է սպասում երիտասարդ, հարսի սպիտակ զգեստով Անուշը (դերում՝ Էդիտա Բաբայան)՝ հավատով, որ տուն է գալու 44-օրյա պատերազմում անհետ կորած նշանածը՝ Արամը: Հավատում է Անուշը, հարևանների կարծիքն է հարցնում՝ ասելով՝ նոր էին նշանվել... Պիեսում հերոսներից Մարիամի (դերում՝ Օֆելյա Մարտիրոսյան) ամուսինը՝ Էդգարը, զոհվել է պատերազմում: Վիշտը սրտում բնակվում է Վաղոյի խանութի հարևանությամբ: Սուրճ է մատուցում շախմատ խաղացող տարեցներին՝ Վաղոյին ու Ավոյին, հույս է տալիս Անուշին, որ Արամը տուն է գալու: Այլ է 85-ամյա Առաքել պապի հոգեվիճակը: Թշնամու տիրապետության տակ է մնացել նրա տունը, հայրենի գյուղի հանգստարանում է ննջում կինը: Առաքել պապը որոշում է իր տուն գնալ՝ հանգիստ ապրելու: Բայց նրա տունը մնացել է թշնամու տիրապետության տակ մնացած տարածքում: Պատանի Տիգրանը պատահաբար հանդիպում է Առաքել պապին, իմանում նրա որոշման մասին, զրուցում են.

- Աա՜յն սարը տեսնու՞մ ես, - հարցնում է Առաքելը:

- Այո, տեսնում եմ, - Տիգրանի պատասխանը:

- Դա չէ, դրա հետևի սարը տեսնո՞ւմ ես...

- Չէէէ՜...

- Ա՛յ, այնտեղ է իմ տունը...

Տիգրանը կարողանում է համոզել ու իրենց տուն տանել տան կարոտով տառապող ծերունուն, որը ողջ արցախցիների հավաքական կերպար է. Տունը կանչում է...

Արցախցի իսկական պատանու կերպար է Տիգրանը, որի նմաններին շատ եմ հանդիպել: Ինչպիսի՜ մեծ սեր ու հարգանք է տածում տարեց մարդու հանդեպ: Պարզվում է՝ Առաքել պապն ու Տիգրանի Շուշան տատը ծանոթներ են: Բայց Առաքելը գաղտնի հեռանում է Տիգրանենց տնից: Բոլորը փնտրում են նրան, ու պարզվում է՝ ադրբեջանցիներն սպանել էին 85-ամյա անգեն ծերունուն, որն ընդամենը փորձել էր իր տուն գնալ: Մեծ ողբերգություն է ապրում Տիգրանը: Հրաչյա Քոչարի «Կարոտ» գրքի գլխավոր հերոսը՝ Հայոց մեծ եղեռնից մազապուրծ փրկված Առաքելը, նույնպես մեծ կարոտով է հիշում հայրենի գյուղը Արաքսի այն ափին: «Գյուղն Արազի ափին է: Այստեղ ոչ ոք դաշտապահ Առաքելի նման չի տեսնում ու չի զգում բնության գեղեցկությունները, թեև չկա մարդ, որ իրեն ավելի խելոք չհամարի նրանից ու չծաղրի նրան»,- գրում է Քոչարը՝ ներկայացնելով իր հերոսի մեծ ողբերգությունը: Քոչարի Առաքելն էլ գաղտնի հեռանում է տնից, անցնում Արաքսը, հասնում իր տուն, վերադառնում և դառնում է խորհրդային հայ չեկիստների զոհ: Չգիտեմ՝ պատահաբար են համընկել մեկ դար տարբերությամբ կայացած իրադարձությունները: Աստղիկի պապը՝ Վաղոն, խանութ ունի Ստեփանակերտում, սակայն, ինչպես ասում է՝ իր օգուտը «նիսյայի տետրն է»: Որոշում է հեռանալ Արցախից, գնալ Ռուսաստան, որտեղից հայրենիք էր եկել ինչ-որ ժամանակ՝ ընդմիշտ մնալու հավատով, որ ռուս խաղաղապահները կպաշտպանեն արցախցուն, որ գոնե մնացած տարածքներում կկարողանան իրենց տերերն ապրել: Սակայն պատերազմից հետո տեղի ունեցող իրադարձությունները հուշում են նրան մոտեցող բռնի տեղահանման մասին: Հեռանալով՝ իր հետ պետք է տաներ նաև թոռնուհուն՝ Աստղիկին: Վաղոյի հարազատ ընկերը՝ պատերազմում հաշմանդամ դարձած Ավոն, դեմ է, որ պետք է լքեն Արցախը: Խռովում է ընկերոջից. «Հու վեր Արցախը թողումա գնա, նա ինձ հընգեր կարա չի լինի»: Տխուր ու ցավալի տեսարան է: Ավոն, չնայած իր վիճակին, փորձում է ամեն գնով պահպանել 44-օրյա պատերազմից հետո մնացած Արցախը: Այնուամենայնիվ, Վաղոն հեռանում է Արցախից՝ իր հետ տանելով թոռնուհուն՝ Աստղիկին: Մեծ ցավ է Տիգրանի համար սիրած աղջկա՝ Աստղիկի հեռանալը: Եվ այս տխուր իրավիճակում հարևանների մոտ է գալիս Անուշը՝ ուրախ ճիչով՝ Արամը եկել է...

Սա է մեր ժողովրդի ճակատագիրը, ինչպես պիեսում է Վաղոն ասում՝ ուժեղի մոտ թույլը մեղավոր է: Ներկայացումն ավարտվեց չդադարող ծափերի տակ: Բեմ եկավ նաև Կ. Քոչարյանը՝ արժանանալով ծաղկեփնջերի, ծափերի, գովեստի խոսքերի: Լույսի տակ արդեն երևում է՝ շատերի աչքերին արցունք կա, տխրություն, կարոտ, նաև՝ տունդարձի հույս: Հանդիսատեսների մեծ մասը հենց պիեսի նույն հերոսներն են: Զրուցում եմ Աստղիկի դերակատար Նինա Ալեքսանյանի հետ, որը բեմում խաղում էր՝ հիշելով իր մանկությունը հարազատ Հադրութ քաղաքում: Ցանկանում է ճանաչված դերասանուհի դառնալ: Տիգրանի դերակատար Գևորգ Ստեփանյանը Հադրութի շրջանի Տող գյուղից է: Կարոտով է հիշում անտառապատ լեռների թիկունքում գտնվող մելիքանիստ իր գյուղը: Երբ բնակվում էի Արցախի Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորում և աշխատում կրթության ու մշակույթի համակարգում, հաճախ էի Ստեփանակերտում շփվում մշակութային գործիչների հետ կամ նրանք էին գալիս Բերձոր: Այդ ժամանակներից եմ ճանաչել ու մտերմացել պիեսի հերոսների դերերում խաղացող դերասաններից Վլադիկ Միքայելյանին, «Արցախի այաներ» ազգագրական խմբի անդամ Ռուզան Գասպարյանին, Սամվել Եվրիյանին, ու մեծ կարոտով ենք հիշում Արցախյան օրերը: Այսօր բռնի տեղահանված արցախցիների համար շատ է կարևոր, որ Երևանում, ինչու չէ, նաև մարզերում հաճախակի տեղի ունենան արցախյան մշակութային խմբերի ելույթներ: Ու շատ է կարևոր, որ մշտապես հնչի Արցախի բարբառը: Բացի մշակութային իրադարձություն լինելուց, այս ելույթները նաև առիթ են, որ արցախցիները մի տեղ հավաքվեն, շփվեն: Պիեսի հեղինակը կարևոր թեմա է ընտրել, և առավել նշանակալի է, որ դերերում արցախցի, տարբեր սերնդի դերասաններ են: Բեմի և զգեստների նկարիչն է Մերի Սարգսյանը: Երգչուհի Հասմիկ Պապայանն իր ֆեսբուքյան էջում գրել է. «... Մեկ անգամ ևս կարող եք դիտել Կարինե Քոչարյանի «Սարից այն կողմ» ներկայացումը, լսելու Արցախի քաղցր բարբառը, հիշելու անցյալը՝ չկտրելով հայացքն ապագայից: Ձեզ հետ անպայման թաշկինակ վերցրեք... Հիանալի ներկայացում է մեր ինքնությունն ու հիշողությունը պահպանելու, գալիք օրերի հույսն ու հավատը չկորցնելու մասին»:

Գրականագետ, երաժիշտ, թարգմանիչ Պերճ Թյուրաբյանը «Սարից այն կողմ»-ի և հեղինակի մասին գրում է. «Գիտենք հատկապես նրանով, որ 2021 թվականի գարնանը, 44-օրյա պատերազմից հետո, Կարինե Քոչարյանը, տեղափոխվելով հետպատերազմյան Արցախ, ապրել է այնտեղ հինգ ամիս, Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնում բեմադրել է «Երկնքից երեք խնձոր ընկավ» ներկայացումը՝ ըստ Նարինե Աբգարյանի համանուն վեպի: Այդ ներկայացումը ցուցադրվել է թե՛ Արցախում, թե՛ Հայաստանում, Եվրոպայի մի շարք քաղաքներում, Ռուսաստանում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում... Արցախը արդեն հայաթափված էր ու մնացել էր սարերից այն կողմ: Եվ այսօր՝ Հայաստանում, նա Արցախի դերասանների հետ բեմադրել է «Սարից այն կողմ» ներկայացումը, որի հեղինակն ինքն է: Նա նորից խիզախում է, նա բացում է վարագույրը. քանի որ վարագույրները չեն կարող փակվել հրահանգով: Պատմության, կյանքի, ճակատագրի, ողբերգության էջերը չեն կարող փակվել հրահանգով, ըստ «հարմարավետության»: Արվեստն ու թատրոնը հարցեր ու պատասխաններ են փնտրում՝ սարի այս կողմում, սարի այն կողմում»:

Արցախցի բանաստեղծուհի, ՀԳՄ և ԱԳՄ անդամ Սոնա Համբարձումյանը «Սարից այն կողմ»-ը համարում է պատմամշակութային ներդրում «Մունք» մշակութային ՀԿ-ի կողմից: ««Սարից այն կողմ» թատերական դրաման չսպիացող հուշ է և ապրելաձև, մտածելակերպ, որի ժամանակ հանդիսատեսը տեսնում է այն սերը, ցավը, կարոտը, խռովքը, որն ունի իր մեջ Հակարիի կամուրջը ֆիզիկապես հաղթահարած յուրաքանչյուր հայ...»,- գրում է նույն ճանապարհով անցած բանաստեղծուհին:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՉՍՊԻԱՑՈՂ ՎԵՐՔ

ԲՌՆԱԳԱՂԹ

2023 թվականի սեպտեմբերի 19-ից Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ռազմական ագրեսիայի հետեւանքով տեղի ունեցավ հայ բնակչության բռնագաղթը եւ էթնիկ զտումը: Շուրջ 115 000 արցախահայեր ստիպված եղան լքել իրենց հայրենիքը եւ տեղափոխվել Հայաստան: Տեղահանման ակտիվ եւ հիմնական փուլը սկսվեց 2023 թվականի սեպտեմբերի 24-ին եւ տեւեց մինչեւ հոկտեմբերի 4-ը: Ավելի քան 9 ամիս շարունակվող շրջափակումից, սննդի, դեղորայքի պակասից եւ սեպտեմբերյան ռազմական գործողություններից հետո խաղաղ բնակչությունը հայտնվեց էթնիկ զտումների եւ ֆիզիկական ոչնչացման ուղղակի սպառնալիքի տակ: Հազարավոր մարդիկ Հակարի կամրջով անցան Հայաստան՝ անմարդկային պայմաններում ոտքով կամ մեքենաներով հաղթահարելով տասնյակ կիլոմետրեր:

Ավտոշարասյունը ասես դանդաղ սողում էր լեռնային գալարապտույտներով. այն ձգվում էր մի քանի տասնյակ կիլոմետրերով: Մի մասը արդեն գտնվում էր Հայաստանի սահմանին՝ Կոռնիձորում, իսկ շարունակությունը դեռ Ստեփանակերտի մերձակայքում էր: Իրար հրմշտող մեքենաների խիտ եւ կիլոմետրերով շարքը մահվան թափորի պես տխուր էր: Հարազատի մահվան հետ համակերպված՝ թաղման արարողությունից հետո հոգեհացի գնալու զգացողություն էր…

Սովորական դեպքում փոքր ավտոմեքենան կանցներ այդ շուրջ 80 կմ-ը առավելագույնը 2 ժամում: Երեսունվեց ժամ տեւեց Ստեփանակերտից այդ չարաբաստիկ անցակետ հասնելը: Դա բոլոր իմաստներով տարօրինակ ավտոշարասյուն էր: Ամենատարբեր մեքենաների շարան. մեծ բեռնատարները, տրակտոր-քարշակները ճնշում էին թեթեւ բեռնատար ավտոմեքենաներին, որոնք ստիպված էին անընդհատ արագ արգելակել կամ պահել ձախ ու աջ (եթե, իհարկե, դա հնարավոր էր), որ չվերածվեին մետաղաջարդոնի կամ չհայտնվեին անդունդում: Բոլորի վերեւում սպառնալից կախվել էին վերամբարձ կռունկներ՝ ծալած սլաքներով, որոնք լրացուցիչ դժվարություններ էին հաղորդում շարժվելու համար: Մինչդեռ այդ անսովոր շարասյան մասնակիցներից ոչ մեկը չէր ուզում խանգարել կամ վնասել երթին, չէր կոպտում անհարմար երթեւեկի համար. հակառակը, բոլորը՝ թե՛ խոշոր բեռնատարների, թե՛ վերամբարձների եւ թե՛ թեթեւ մարդատարների վարորդները ձգտում էին զիջող ու հանդուրժող լինել խախտումների հանդեպ, հատկապես որ որոշ ավտոմեքենաների ղեկին դեռահասներ էին, որոնք չունեին վարելու բավական փորձ եւ բնականաբար նաեւ՝ իրավունք:

Այդ շարասյան մեջ բոլորը հավասար էին: Բոլոր մասնակիցներին այժմ միավորում էր մեկ աննախանձելի ճակատագիր. տասնյակ հազարավոր մարդիկ ստիպված լքում էին իրենց հայրենիքը եւ ինչ-որ ուժով օժտված՝ շարժվում էին դեպի անորոշություն, որը նախընտրելի էր, քան նրանց գլխավերեւում ծառացած մահվան իրական վտանգը: Չնայած մահը բաց չթողեց նաեւ տեղահանման ճանապարհին: Ոչ բոլորի սիրտն էր կարող դիմանալ: Որոշ ավտոմեքենաներով փոքր երեխաների հետ տեղափոխում էին նաեւ ծածկոցի մեջ փաթաթած ընտանիքի անդամի անշնչացած մարմինը…

Սողացող ավտոշարասյունը ասես ժամանակի չար մեքենա լիներ, որը անդարձ տանում էր մեզ հեռու, թվում է թե մեր այսքան մոտիկ անցյալից, որտեղ մնացել են տարիներով վաստակած մեր ունեցվածքը, խնամված այգիները, սիրելի զբոսայգիները եւ փողոցները, մանկությունը, երջանիկ կյանքը եւ հարազատների գերեզմանները: Անհայտ էր, թե ինչ ապագա էր սպասում շրջադարձից այն կողմ…

Ստիպված էինք գիշերը նույնպես անցկացնել մեքենաների մեջ՝ աստղալից, սառը երկնքի տակ, որն անտարբեր էր ներքեւում կուտակված մարդկային անխոս վշտի հանդեպ: Լուռ սպասում էինք, թե հերթական կանգից հետո երբ պիտի սկսենք կրկին շարժվել: Մոտակա կիրճից միայն լսվում էին շնագայլերի ոռնոցները, ասես երեխաներ էին լացում… Գաղթի դժոխային ճանապարհն եւ նույնքան դժոխային ապրումներ…Լացելու էր…

Հազիվ լուսացել էր, երբ պետք է արդեն առաջ շարժվեինք, բայց դեռ կես կիլոմետր չանցած՝ նորից ստիպված էինք կանգնել: Բնական կարիքները հոգալու համար մարդիկ իրար քողարկում էին ծածկոցներով՝ անմիջապես ճամփեզրին: Իրարից ջուր էինք խնդրում, դեղ կամ այլ մի բան, բայց ոչ՝ հաց: Հացն արդեն այլ գին ուներ բոլորիս համար: Ինն ամիս հացի եւ այլ հերթերում կոփված արցախցիներիս վերջին հերթն էր՝ Հայրենիքից հեռանալու հերթը, որտեղ վերջ չէին հարցնում: Փրկվել էր պետք: Խոսակցություններ էին հասնում, թե անցակետը ժամանակավորապես փակել են, դրա համար էլ խցանում է: Մեկ այլ զրույցում ասում էին, թե մեքենա է վառվել առջեւում, այդ պատճառով է խցանումը: Ցավալի էր նայել ճամփեզրերին թողնված վառվող կամ ջարդված ավտոմեքենաներին, որոնք շարժմանը զուգընթաց ավելի էին շատանում:

Շարժվում էինք ու կանգնում: Երեկոյին մոտ հեռավոր տեսահորիզոնում երեւաց անցակետը՝ դիմացը կուտակված երկար գծով մեքենաների շարանով: Ակնհայտ էր, որ մարդկանց ու ավտոմեքենաների պարունակությունը մանրազնին ստուգում են:

Հասանք Հակարի:

Անցակետում մեր ավտոմեքենան դիմավորեցին երկու սպա՝

սահմանապահի համազգեստով ադրբեջանցի եւ ռուս խաղաղապահ: Նրանցից յուրաքանչյուրը բարեւեց իր լեզվով: Ընդգծված քաղաքավարությունը չէր կարող քողարկել ադրբեջանցիների չարախիզդ, գոհունակ հայացքները: Գլխաքանակի պես մեզ հաշվելուց, փախստականի մեր իրերը սկանավորելուց հետո թույլատրեցին անցնել: Այն միտքը, որ մազապուրծ փրկվելու համար պետք է շնորհակալ լինենք, բարոյապես ոչնչացնող էր:

Սոված, անքուն, հոգեպես հալումաշ եղած՝ ոտք դրեցինք Հայաստան: Կոռնիձորում մեր հայրենակիցների՝ մեր հանդեպ ցուցաբերած հոգատարությունն անչափ հուզիչ էր, կյանք վերադարձնող: Շնորհակալության խոսքեր դժվար է գտնել… Երբեմն հույզերն ու ցավն այնքան շատ են, որ բառերը լռում են:

Լուսացրինք Տեղ գյուղի մերձակայքում՝ կրկին ավտոմեքենայի մեջ, մինչեւ փոքր-ինչ ուժ կհավաքեինք Երեւան հասնելու համար: Տեղ գյուղի խայտաբղետ, առատությունից ճայթող մարկետը մեր աչքի համար անսովոր էր: Բլոկադայի օրերին քաղցրավենիք շատ էի կարոտել, բայց ամաչում էի քաղցրին կարոտ երեխաների համապատկերում որեւէ կերպ արտահայտել իմ՝ հասուն մարդուս քաղցրի կարոտը: Գիտեի, թե խանութում քաղցրեղեն տեսնելուն պես իսկույն կիլոգրամներով գնելու էի: Սակայն երբ մտա խանութ, ապշել էի առատ ընտրությունից, չէի կարողանում կողմնորոշվել, թե ինչ է պետք գնել: Խանութից այդպես էլ քաղցրավենիք չգնեցի, բավարարվեցի այն մի քանի կոնֆետով, որոնք հացի եւ այլ սննդի հետ տոպրակի մեջ Կոռնիձորում տվել էին մեզ: Գիշերային մթության մեջ հայերեն խոսք լսելով՝ հանգիստ շունչ էինք քաշել: Ավելորդ ժամանակ չծախսելու համար, որ առանց այն էլ քրքրված մասնակիցներով շարասյունը կրկին չկանգներ, մեր հայրենակիցները սննդով տոպրակը ավտոմեքենայի պատուհանից ներս էին տալիս եւ հարցնում էին, թե մեքենայի մեջ երեխա կա՞: Ասացինք՝ ոչ: Երեւի ճշտում էին, որ երեխաների համար հատուկ պատրաստված փաթեթներ տային: Մինչդեռ որքա՞ն հուզիչ էր այն կարեկցանքը, որ չնայած մեզ հետ երեխաներ չկային, բայց մեզ տված փաթեթներում կոնֆետ էլ կար. չէ՞ որ հասուն մարդիկ եւս կարող են քաղցրավենիք կարոտել: Կոնֆետները նույնքան անուշահամ էին, որքան մեր հայրենակիցների հոգատարությունն ու ապրումակցումը, որն ասես մեր տառապանքը փոխհատուցում էր:

Ապաստանեցինք մեր ընկերների տանը Երեւանում, որոնց միջամտությամբ էլ ծանոթացանք ու հյուրընկալվեցինք հրաշալի մարդկանց ընտանիքում:

Վարձակալության համար տան փնտրտուքները, անմարդկային գները հիասթափեցնող էին: Մեր գրանցվելու եւ հաշվառվելու հերթերում կանգնելու ժամանակ մարդկանց խոսակցության պատառիկներից մի քանի անգամ լսեցի «մատան փաթաթան» դարձրած՝ «անշնորհակալ ղարաբաղցի» արտահայտությունը, «թողին փախան» ծամծմված խոսույթը, զինվորին ջուր չտվող ղարաբաղցու պատմությունը, լավ պայմաններով տուն ուզելու մեր աչքածակության մասին…Չլսելուն տալ է պետք, քանի որ այդ խղճուկ մարդիկ չեն կարող արժեզրկել Կոռնիձորում մեզ ընդունած մեր հայրենակիցներին, Հայաստանում ապրող իմ ընկերներին ու հարազատ դարձած՝ սկզբնական շրջանում դեռ անծանոթ, մեզ հյուրընկալած մարդկանց:

Քառասից հետո փորձում ենք ինքներս մեր մեջ վերագտնել կյանքը սիրող, արժանապատիվ մարդուն, բայց շատ ջանքեր են պետք կյանք վերադառնալու, փախստականի կերպարը թոթափելու, նոր միջավայրին հարմարվելու համար…

Բռնագաղթության մասին ամենամեծ թյուրիմացությունն այն է, որ ժամանակի ընթացքում կհարմարվես: Ո՛չ: Անգամ տասը տարի հետո դու կարող ես մնալ «ակցենտով խոսող» մարդը, որը երբեմն բառեր է փնտրում, չի մեծացել տեղական կատակների վրա եւ մշտապես մնում է մի փոքր «օտար»:

Գաղթականի ցավը միանգամից չես զգում: Առաջին ամիսներն անցնում են վազվզուքի մեջ՝ փաստաթղթեր, բանկեր, կացարանի փնտրտուք, աշխատանք, ոմանք՝ դպրոց ու մանկապարտեզ…Դու այնքան ես զբաղված խղճուկ գոյությունդ պահելով, որ գրեթե չես հասցնում կարոտել: Սակայն աստիճանաբար սկսվում է կարոտը: Եվ հենց այդ ժամանակ է սկսվում այն, ինչին նախապատրաստվել հնարավոր չէ: Հանկարծ հասկանում ես, որ այլեւս չես հիշում քո քաղաքի տուն տանող այն ճանապարհը, որտեղ մեծացել ես: Սկսում ես շփոթել փողոցների անունները: Չես կարողանում հիշել, թե ինչ էր տեղակայված հարազատ վայրի այն խանութի կողքին, որտեղ գնացել ես տարիներ շարունակ: Բայց հիշողությանդ մեջ մնացել են մի ժամանակ գնված տեղաշորի նոր կոմպլեկտը, գեղեցիկ սպասքը տոների համար, բաժակները, որոնք պետք է դառնային ապագա կյանքի մի մասը… Եվ հասկանում ես, որ այն կյանքն այդպես էլ չապրվեց: Այդ ամենը մնացել է այնտեղ՝ գուցե մեկին նվեր է գնացել եւ ինչ-որ մեկն օգտագործում է այն, իսկ միգուցե ոչնչացվե՞լ է շատ ավերված բաների պես, թե՞ մինչեւ հիմա իր տեղում է, մեր բնակարանում, որտեղ, սակայն, հնարավոր է, որ մենք այլեւս չգնանք:

Ամենածանրը բռնագաղթելու մեջ իրերի կորուստը չէ, այլ՝ որ աստիճանաբար անհետանում է այն վայրը, որտեղ դու յուրային էիր, իսկ քաղաքականությունն այնպես է անում, որ անգամ որոշ զրույցներ դառնում են անհնար: Ծանր է, որ չես կարող նստել ավտոմեքենան կամ տոմս գնել ու պարզապես վերադառնալ: Հետդարձի ճանապարհ չկա: Բայց այստեղ էլ տեղացի չես: Հավանաբար բռնատեղահանության ամենաբարձր գինը ոչ թե իրերով ու գումարով, այլ մեր սեփական պատկանելության մի մասով վճարելն է, եւ այն զգացողությամբ, որ աշխարհում գոյություն ուներ մի վայր, որտեղ պետք չէր բացատրել, թե ով ես դու:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԻՐԱՊԱՏՈՒՄ

Ամալյա ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄՊՐՈՒԿԻ ՄԵՋ ՉՏԵՂԱՎՈՐՎԱԾ ԿՅԱՆՔ

Գյուղը դատարկվում էր: Իննսուներեքամյա Ալեքսանդր պապը, որ երբեք չէր ընկճվել և ոչ մի իրավիճակում իրեն չէր կորցրել, միշտ սթափ բանականությամբ էր քննել իրերն ու երևույթները, իրեն հատուկ փիլիսոփայությամբ մեկնաբանել աշխարհի բանը, այժմ շվարած սենյակի երկայնքով այս ու այն կողմ էր գնում ու քթի տակ թնթորում… Նա փորձում էր հասկանալ կատարվածն ու կատարվելիքը, հիմա ի՞նչ. ինքը պետք է լքի իր տունը, իր օջախը, ծննդավայրը, մի ամբողջ ժողովուրդ պետք է դառնա անտուն, անտեր, գաղթական… Թերևս սա ամենաանհավանականն էր, որ երբևէ անցել էր նրա մտքով: Անգամ 90-ականներին, ավելի քան չորս տարի տևած սարսափելի պատերազմի ժամանակ, չէր ընկճվել, չէր կորցրել իրեն, չէր պատկերացրել նման անդառնալի աղետ: Իր ապուպապերի հողից ո՞ւր գնա, իր հազարամյա երկիրը թողած, իր պատկառելի տարիքն առած՝ ո՞ւմ դուռը ծեծի, ասի՝ ես ո՞վ եմ, որտեղի՞ց եմ, ինչո՞ւ եմ եկել… Մի մեծ խայտառակություն՝ չասված ու չլսված, չտեսնված… Ապրած կյանքն այժմ մի գրոշի արժեք չուներ: Նա իրեն ոչ թե պարտված՝ ոչնչացված էր զգում: Ներսը լափու էր տալիս, չգիտեր՝ ինչ աներ: Երանի մի բան փոխվեր, երանի հրաշք կատարվեր: Նայում էր ճամպրուկին, ախր ոնց տեղավորեր դրա մեջ իր ունեցածը, իր տունը, իր երկիրը, իր ապրած կյանքը…

- Չէ՛, զուլում է, զուլում…

Ալեքսանդր պապն այն մարդկանցից էր, որ միշտ իրատես էր և նախապես հաշվարկում էր բոլոր փաստերն ու իրողությունները և անսխալ հետևություններ անում: Դեռ խաղաղ էին օրերը, երբ զգուշացնում էր՝ ուշ թե շուտ թուրքը գալու է Արցախի հողերի ետևից, ոխակալ թշնամին չի հրաժարվելու մեր հայրենիքը գրավելու մտքից: Դրախտավայր է Արցախը՝ հարուստ հանքերով, ջրային պաշարներով, բերրի հողերով ու անտառածածկ տարածքներով: Միշտ էլ թուրք-քոչվորները զավթում էին լավագույն տարածքները, պտղատու հողերն ու այգիները, գյուղերն ու քաղաքները, ուրիշ ազգերի ստեղծածը: Մեկ դար առաջ ցեղասպանել ու հայաթափել են Արևմտյան Հայաստանը, ապա՝ Նախիջևանը… Տե՛ս, երբ են Դաշտային Ղարաբաղը զավթել, հիմա էլ եկել է Լեռնային Ղարաբաղին տիրանալու հերթը: Գիշերուզօր պետք է զինվեինք ու ավելի շատ մտածեինք նեղ օրվա մասին: Ուր է թե էդպես լիներ: Իրականում պապի նպատակը շրջապատի մարդկանց ահաբեկելը չէր, և ոչ էլ բնույթով էր հոռետես, պարզապես պատմության պատգամը գերազանց էր յուրացրել, նաև՝ իր կյանքի փորձառությունից, թուրքին լավ ճանաչելուց: Նրանց հետ կողք կողքի ապրել էր ողջ գիտակցական կյանքը խորհրդային համակեցության տարիներին: Նախ, դեռ տակավին պատանի, սովորելու համար մեկնել էր Բաքու, ապրել մորաքրոջ տանը, որի հարևանները ադրբեջանցիներ էին, ապա որպես վարորդ՝ աշխատել էր ադրբեջանցի նախարարի մոտ: Քաջատեղյակ էր նրանց բարքերին ու սովորություններին, անսխալ ճանաչում էր նրանց տեսակը, մտածողությունը, հոգեբանությունը, անգամ լեզվին էր տիրապետում, ուներ ընկերներ: Երբ վերադարձավ հայրենի Խաչեն գյուղ, աշխատանքի անցավ կոլտնտեսությունում նախ՝ որպես բեռնատարի վարորդ, ապա կոլտնտեսության լուծարումից հետո՝ գյուղապետի վարորդ: Նրա մեքենայում մշտապես Օմար Խայամի գիրքն էր, որտեղից պարբերաբար մեջբերումներ էր անում: Որքա՜ն իմաստնացած էին նրա զրույցները. ձորակի մարդիկ գալիս էին նրանից խրատ ու խորհուրդ հարցնելու: Խոսում էր դանդաղ ու կշռադատված, ամեն մի խոսքը՝ համեմված ժողովրդական իմաստնությամբ ու իմաստասիրական մեջբերումներով: Զարմանում էին՝ ոնց էր այդքանը հիշում: Ալեքսանդր պապը շատ էր սիրում գիրք կարդալ, առավել շատ անհագ ընթերցում էր հայոց պատմություն, հայ գրականություն, հայագիտությանը վերաբերող աշխատություն: Կային գրքեր՝ «Իսրայել Օրին», «Գևորգ Մարզպետունին», «Մխիթար Սպարապետը», որոնք անընդհատ վերընթերցում էր: Իր սեղանի գրքերն էին, ու սրբությամբ էր պահում: Ինչքան էլ աշխատանքից հոգնած, ուշ գար, անպայման պիտի ընթերցեր: Այդ արարողակարգը երբեք չփոխվեց մինչև կյանքի վերջը: Կարդում էր երբեմն նաև առանց ակնոցի: Մի անգամ Մոսկվա էր մեկնել ու իր հետ մի բացառիկ գիրք էր բերել՝ «Родословные тайны армянских князей»: Ամեն օր ընթերցում էր ու վերընթերցում այդ գիրքը: Այն հայ իշխանավորների մասին գաղտնիքներ պարունակող գիրք էր, բավական արժեքավոր:

Հատկապես ծմռանը հաճախակի էր վառարանի կողքին նստում, գիրքը վերցնում ու խորասուզվում տողերի մեջ: Շնչառությունը դանդաղում էր, դեմքին մի տեսակ լարվածություն էր հայտնվում: Եվ երբ հարցրել են՝ ինչու է Օրի կարդում, հատկապես, երբ տխուր է, պատասխանում էր. «Որովհետև երբ իմ մեջ աղմկում է անհուսությունը, Օրին ինձ հիշեցնում է՝ մարդն է հողը պահում, ոչ թե պատը»:

Ալեքսանդր պապն ուներ իր ապրելու կանոններն ու փիլիսոփայությունը, որոնք տարիների ընթացքում դարձել էին նրա կենսակերպը: Սնվում էր օրը երկու անգամ. չափավոր ու շատ դանդաղ, մանրակրկիտ ծամելով, հետևելով՝ երկա՜ր խորհելով: Ամեն բան չէր ուտում, ուտում էր միայն իր սիրած ուտեստներն ու կերակուրները, ամենից շատ սիրում էր տոլմա, խաշիլ, կուրկուտ: Թեյ շատ էր խմում, վաղ քնում և վաղ արթնանում, ապրում էր բնության հետ հաշտ ու համերաշխ: Միայն մի բանում էր աշխարհի հետ անհաշտ, որ թուրքը պիտի տիրանա իր ունեցվածքին, իր պապերի հողին, իր լեռներին ու աղբյուրներին, իր սրբատեղիներին…

Հաճախակի հիշում էր այդ համակեցության տարիները, թե ինչպես էին ամեն օր ազերիները կովերն ու ոչխարները գողանում: Ամենացավալին այն էր, որ իրենց քրտինքով ստացված գյուղմթերքի մեծ մասն ուղարկվում էր Բաքու, իսկ չարքաշ գյուղացիներին չնչին մասն էր մնում գոյատևելու համար: Շատ անարդարություններ էր տեսել կյանքում, պայքարել դրանց դեմ, եղել է չափազանց ազնիվ, ինչի համար իրեն էին վստահում պատասխանատու գործերը:

Երբ սկսվել էր Արցախյան շարժումը, Ալեքսանդր պապը վտանգ էր զգացել, գիտակցել է, որ լավ բանի չի տանելու այդ ամենը, քանի որ ըմբոստանում են չարիքի դեմ, որի դարավոր նպատակն է վերջ տալ հային ու Հայաստանը: Շարժմանը հաջորդեց երկարատև պատերազմը: Վիճակն օրհասական էր, 5-6 տարեկան թոռներին հարսի հետ ճանապարհեց Երևան. հրամայել էին կանանց ու երեխաներին տարհանել, դրությունը ծանր էր… Որդիներն ու գյուղի տղամարդիկ առաջնագծում էին, թեժ մարտերում: Ավագ որդին ծանր վիրավորվեց: Գյուղը 9 զոհ տվեց:

Պատերազմը դեռ չէր ավարտվել, երբ Երևանից հարսը թոռների հետ եղբոր որդու զինվորական բեռնատարով, որով գնացել էր զինամթերք բերելու, վերադարձան Արցախ: Երբ հասան Շուշի, այն ավերված տեսան, դեռ թանձր ծուխ էր բարձրանում հրդեհված տներից ու շինություններից, ամենուր անսարք հրասայլեր ու զրահամեքենաներ էին ճանապարհին, սևացած ու պայթած արկերի կտորներ էին թափված այս ու այն կողմ: Հասան գյուղ, երեխաներին դիմավորողը Ալեքսանդր պապն էր՝ կնոջ հետ: Աչքերը ջուր էր կտրել, մինչ երեխաները կհասնեին տուն:

Օրեր, ամիսներ ու տարիներ գլորվեցին: Հետո եղավ ապրիլյան քառօրյա պատերազմը, և էլի զոհեր, վիրավորներ, տարածքային կորուստ: Չանցած 4 տարի՝ նորից պատերազմ սկսվեց: 2020 թ. սեպտեմբերի 27-ն էր, կիրակի օր: Ալեքսանդր պապը, սովորության համաձայն, առավոտ կանուխ արթնացել ու իջել էր այգուց հավաքած մրգերից օղի թորելու, երբ սկսվեց ռմբակոծությունը: Սկզբից թվացել էր՝ որոտ է, բայց ի՞նչ որոտ, երկինքը լազուր կապած էր, իսկ աշնան արևը հաճելիորեն տաքացնում էր ցողաթաթախ հողը: Չարաբաստիկ պատերազմի ձայներն էին, վաղուց ականջին ծանոթ, որ չես շփոթի աշխարհում և ոչ մի ձայնի հետ. դղրդում էին երկիր ու երկինք, ասես աշխարհի վերջն էր: Այսքան մոտիկ ու հուժկու երբեք չէին եղել հրետակոծությունները: Թողեց բահն ու աճապարեց տուն: Տնեցիներն արդեն խուճապահար դուրս էին եկել բակ և չգիտեին ինչ անել: Պապն ուղղորդեց բոլորին նկուղ՝ հորդորելով պահպանել հանգստություն ու զգոնություն: 90-ականներին թոռներին էր պատսպարել նկուղում, հիմա էլ՝ ծոռներին…

Անօդաչու թռչող սարքերը երամի պես գրոհել էին կապույտ լազուրը և ռմբակոծում էին ամենուր, ուր տեսախցիկը ֆիքսում էր՝ կլիներ տուն, մեքենա թե զորամաս, վայրկյանների ընթացքում վերածվում էր մոխրի:

…Իր մտքերի հետ կռիվ տալով՝ անվերջ ձգում էր ժամանակը, որպեսզի մի քանի վայրկյան ավելի մնար իր օջախում, իր կառուցած տանը, որը երկու անգամ քանդել ու վերակառուցել էր, առաջին անգամ քանդել էր իրենց հայրական փոքրիկ անշուք տունը, որն ավելի շատ հյուղակ էր: Դեռ փոքր էր, երբ երազել էր մի օր այդ տնակի տեղը մի մեծ տուն կառուցել ու կառուցել է երկհարկանի գեղեցիկ առանձնատուն: Ու երբ տեսել է, որ իր սրտով չէ, քանդել ու տեղը ավելի մեծն է կառուցել՝ մտածելով, որ մեծ գերդաստան են, բարեկամներն էլ՝ շատ, որպեսզի բոլորին տեղ լինի:

Մի ամբողջ կյանք է ապրել իր տանը: Այդտեղ ծնվել, մեծացել էին չորս զավակներն ու թոռները: Կինը՝ Մանյան, գյուղի բուժքույրն էր. բարի ու գթասիրտ կին, անչափ սիրված բոլորի կողմից: Հիշեց, թե ինչքան հաճախ էին իր մեքենայով գիշերվա կեսին հիվանդներին հասցնում մայրաքաղաքի հիվանդանոց: Այդպես էր պետք. օգնել մարդկանց, քանի կարող ես ու ինչով կարող ես: Դա է կյանքը, մնացածը սուտ բան է:

Բա ողջ կյանքում տունտեղ դնես, ոսկոր ճաքեցնես, որ էսօր թուրքը քո տնից քեզ հանի՞, բա այսքան արյուն թափես, երկիր կառուցես, որ էսօր քարուքանդ անեն, արած-թողածդ թուրքը գա վայելի՞, բա այսքան անարդար աշխարհ կլինի՞…

Անողոք պատերազմը ծվեն-ծվեն արեց Արցախը: Երբեք չի մոռանա, երբ ավտոբուսներով ծերերին, երեխաներին ու կանանց տարհանեցին Երևան: Երբեք իր տնից դուրս չէր գա, եթե չլիներ թոռների համառությունը: Ճանապարհին, Հակարի գետ չհասած, թշնամին թիրախավորեց իրենց ավտոբուսը: Հրաշքով փրկվեցին. ռումբը ճանապարհի կողքին պայթեց, ու քիչ էր մնում՝ պայթյունի ալիքից ավտոբուսը շրջվեր ձորը: 44 օր տևած աղետալի պատերազմից հետո գոնե վերադարձան տուն, չնայած շատերը կորցրել էին իրենց տունուտեղը, զավակներին: Շուշին, Հադրութը, Քարվաճառը, Քաշաթաղն ու հարակից բնակավայրերը թուրքին են անցել: 44-օրյա պատերազմում ավագ որդին Քռասնի-Կարմիր շուկա հատվածում ռազմագործողությունների ժամանակ կրկին վիրավորվեց: Այս անգամ չորրորդ սերնդի զենքի՝ անօդաչու թռչող սարքի ռմբակոծության հետևանքով:

…Նորից սեպտեմբեր ու նորից պատերազմ: Այս անգամ տևեց ընդամենը մեկ օր, բայց ամենաղետալին էր, անդառնալին: Հանձնում էին Արցախից մնացածը՝ առանց արցախցու կամքն ու ցանկությունը հարցնելու:

Ալեքսանդր պապը, որ միշտ ուշիուշով հետևում էր լուրերին, մշտապես հույս էր պահում, որ մեծ տերություններն ինչքան էլ իրենց շահերն ունենային Ադրբեջանից ու Թուրքիայից, այնուամենայնիվ չէին թողնի, որ աշխարհի մեծագույն անարդարությունը տեղի ունենար:

…Մտքերի մեջ իրեն կորցրած՝ մոտեցավ պատշգամբին, խորը հառաչեց ու նայեց խոժռված Սըրումանց սարին, որ բոլոր պատերազմների ժամանակ գյուղի վահանն էր, իր վրա էր վերցնում գյուղի վրա արձակած բոլոր արկերն ու գնդակները: Նայեց աշնանային երփներանգ հագած ծեր հսկային ու աչքերը խոնարհեց. ի՜նչ ասեր, նայեց աջ՝ Կըրասեն Ծյորեն ու ավելի խորը հառաչեց: Այդ դեղնակարմիր անտառի փեշին գյուղի հանգստարանն է, որտեղ ննջում են իր հարազատները՝ նախապապը՝ Թուրանց Վանին, պապը՝ Մովսեսը: Հայրը՝ Վլադիմիրը, չկար, գերեզման չունեցավ, մնացել էր Հայրենական պատերազմում: Հորեղբայրներն ու նրանց զավակները, մորական տատը՝ Շահում աճին, մի տղամարդ կին, հիշում էր միշտ խլեղով՝ տարազով, ձիու վրա նստած, որ գիշեր-ցերեկ աշխատել է աղջկա որբացած յոթ զավակներին մեծացնելու, ոտքի կանգնեցնելու համար, ողջաղ ու չարքաշ մայրը՝ Աստղիկը, վաղաժամ մահացած կինը՝ Մանյան, երեք եղբայրները. ավագ եղբայրը՝ գյուղսովետի նախագահ Նարիմանը՝ (ավանդույթի համաձայն՝ թուրքի անուն էին դրել, որ չմահանա, մինչ իրեն ունենալը մայրը երեք անգամ ծննդաբերել էր, բայց երեխաները մահացել էին) կնոջ՝ Փառանձեմի հետ, Երեմը՝ իր կնոջ՝ Եփրաքսյայի հետ, վաղաժամ մահացած Սերգեյը՝ չորրորդ եղբայրը, որ տակավին երիտասարդ էր, անգամ ամուսնացած չէր, իսկ Արտյուշան մնացել էր հեռավոր միջին Ասիայում՝ Ուզբեկստանում, չկարողացան դին տեղափոխել հայրենի գյուղ, ավագ քույրը՝ Նատալյան, եղբոր ջահել տղաները՝ ավտովթարի զոհ դարձած, վաղաժամ մահացած Վիտալիկը, Վլադիկն ու կինը՝ Սվետլանան… Մի ամբողջ գերդաստան իրեն էին սպասում այնտեղ՝ հանգստարանում, հիմա ինքը ո՞ւր գնա, հարազատներից հեռու ո՞ր հողում պիտի հանգրվանի… Յոթ զավակներից ինքն ու փոքր քույր Սվետլանան են մնացել… Երկուսն էլ տարիքն առած, երկուսն էլ դարձած գաղթական… Ախր այդպես ո՞նց կլինի, մարդկության, բնության մեծագույն անօրինությունն է, մեծագույն զարհուրանքն ու ոճրագործությունը մարդ արարածի հանդեպ…

- Մարթին կյանքը ծանդր պատմությունա,- խորհում էր պապը,- էս պատերազմներն էլ իրենց հերթինըն աղ լցնում էդ մի թիքյա կյանքին ու ավելի դառնացնում:

- Դեդո, պըրծեր, քշաց հըղեյնք ինում, թորքերը մտալև շենը,- ներքևից կանչեց թոռը:

- Պա բենզինը՞ք քըթալ,- հարցրեց պապը:

- Չէ, ճարալչընք, յէկ ճանապարհվենք, գուցե հղեննի մի լյուս ծաքյի,- զայրույթից ու վրդովմունքից թոռը ծխախոտ էլ չուներ, որ ծխեր, գոնե ջղերը մի պահ հանգստանային: Վերջին անգամ երբ էր ծխել, չէր հիշում, ինը ամիս շրջափակում էր, հացի խնդիրն էր օրհասական, հիմա նաև լինել-չլինելու խնդիրն է: Ե՞րբ էր, որ ընկերներով ռուս զինվորներից շատ թանկ գնով մի տուփ սիգարետ գնեցին: Երանելի պահ էր:

Երեկ բոլոր զինվորականներին հորդորել էին վառել իրենց զինվորական գրքույկներն ու շորերը, որովհետև եթե հանկարծ թուրքերը ներխուժեին տները, առաջինը հաշվեհարդար էին տեսնելու հենց պատերազմի մասնակիցների հետ: Տասնհինգ տարվա զինվորական թոռը, որ մասնակցել էր երեք պատերազմերի ու 18 տարեկանից բանակում էր, չէր համակերպվում խայտառակության հետ, և եթե պապիկի ու հոր հարցը չլիներ, գուցե ինքը այլ կերպ վարվեր, մտքով ամեն ինչ անցնում էր:

Ամեն մեկն իր մտքերի ծանրությունից կուչ էր եկել հարազատ տան պատի տակ, ու այդ բեռով պիտի ճանապարհվեին, ապրեին այդ բեռան տակ: Ապրե՞ի՞ն, ինչպե՞ս… Պատերազմների, կորուստների, անորոշության, գաղթի երկար ու ձիգ ստվերները փռվել էին նրանց կյանքի բոլոր մնացյալ օրերի վրա…

Մեքենայի մեջ ընդամենը 2-3 լիտր վառելիք էր, հազիվ կբավականացներ մինչև Ստեփանակերտ: Ամենածանրը տնից դուրս գալն էր: Ալեքսանդր պապը դժվարությամբ ու դժկամությամբ իջավ աստիճաններով, ասես ամեն քայլի հետ ուզենար հետ քայլ անել, բայց իջավ ու մտավ այգի՝ իր տնկած ծառերին հրաժեշտ տալու: Մեկ առ մեկ հիշեց, թե որ ծառի տնկին որտեղից էր բերել, տնկել, ջրել փայփայել իր զավակի պես, խնամել, որ մի օր բերք տա, ու իր թոռներն ու ծոռները վայելեն: Ծառերի շվաքի ներքո ինքն իրեն ոչինչ զգաց. ծառը մնում է, ինքը գնում է: Հիշեց, որ երկու օրից արտը պետք է հնձեին, աչքը ջուր էր կտրել, մինչ ցորենի հասկերը դեղնել էին: Ապա մտավ գոմ, դուռը բացեց ու իր պահածպաշտած անասուններին բաց թողեց, իսկ հավերի առաջ տան եղած ցորենը շաղ տվեց ու առատ ջուր լցրեց ջրամանները: Հալումաշ անող 9 ամիսներին մի հավ չմորթեցին՝ պահելով նեղ օրվա համար: Շրջափակում էր, հաց չկար, ալյուր չկար, ամիսներ գլորեցին կիսասոված, սոված… Է՜հ, կոպեկ չարժե, այժմ պարտվածի պես լքում են իրենց հայրենիքը:

Խոր ծերության մեջ ստիպված պետք է դառնա գաղթական՝ հեռանալով իր տնից, ծննդավայրից, քանի որ թուրքը ներխուժել է իր երկիրը, իր տուն, և նա է հիմա թելադրողը:

☞8

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՓԱՅԼՈՒՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Արցախում խառը մենամարտերը (MMA) լայնորեն տարածված ու զարգացող մարզաձեւերից էր՝ շնորհիվ ճանաչված մարզիչ Գարեգին Աղաբալյանի ջանքերի: 2023թ. բռնատեղահանվելուց հետո Գարեգին Աղաբալյանը վերսկսեց մարզչական գործունեությունը Երեւանում եւ ներկայում նախագահում է Հայաստանի խառը մենամարտերի (MMA) ֆեդերացիան: Նրա ներդրած կազմակերպչական եւ մարզչական պրոֆեսիոնալիզմը, փորձը եւ նվիրումը մարզումները դարձնում են արդյունավետ ու ոգեշնչող, որի համար էլ հաղթող մարզիկների եւ մարզիչների կողմից նա արժանանում է առանձնահատուկ երախտանքի:

Օրերս Թաիլանդի Բանգկոկ քաղաքում կայացած Խառը մենամարտերի (MMA) One Championship մրցաշարում Հայաստանի ներկայացուցիչ Կարեն Ղազարյանը փայլուն հաղթանակ տոնեց: Սա աննախադեպ հաղթանակ էր մեր երկրի համար, քանի որ խառը մենամարտերի պատմության մեջ մեր երկրում ապրող, պարապող որեւէ մարզիկի դեռ չէր հաջողվել հաղթել այս հեղինակավոր մրցաշարում:

- Հանդես եկա 56 կգ քաշային կարգում: Սա պրոֆեսիոնալ մենամարտ էր: Մրցակիցս շատ փորձառու՝ ճապոնացի Հիսաշի Էզակին էր: Տեխնիկական նոկաուտով վաղաժամ հաղթեցի նրան առաջին ռաունդից հետո: Քանի որ դեմքի վնասվածք էր ստացել, հրաժարվեց շարունակել պայքարը: Նա բավականին փորձառու մարզիկ է, բրազիլական ջիու-ջիցուի աշխարհի առաջնության փոխչեմպիոն: Խառը մենամարտերում ունեցել է 7 հաղթանակ՝ առանց որեւէ պարտության, հիմա արդեն դարձավ 7 հաղթանակ ու 1 պարտություն: Իսկ ես խառը մենամարտերում արդեն ունեմ 6 հաղթանակ եւ 1 պարտություն:

Զգացողություններս աննկարագրելի էին հաղթանակից հետո, ասես շոկի մեջ լինեի այդ պահին: Ամենաշատը հպարտության զգացողություն ունեցա: Հաղթանակս նվիրում եմ իմ հայ ազգին, հարազատներիս, մեր զինվորներին, սա միայն իմ հաղթանակը չէ, այլ բոլորինս: Սա իսկապես մեծ հաղթանակ է ինձ համար: Քանի որ իմ ծննդավայր Գավառում չկան պարապելու պայմաններ, դրա համար ես, հաղթահարելով այդքան երկար ճանապարհը, գալիս հասնում եմ մայրաքաղաք, որ մարզվեմ: Բայց երբեք չեմ ընկճվում, քանի որ հենց այդպիսի դժվարությունների շնորհիվ ենք մենք կոփվում ու հասնում նման տպավորիչ հաղթանակների: Շուրջ երկու ամիս պատրաստվել էի այս մրցաշարին: Հաղթանակով բարձրացավ իմ վարկանիշը դասակարգման աղյուսակում: Ինձ համար շատ մեծ պատիվ է, որ մեր երկրում առաջինն եմ ու դեռ միակը, որին հաջողվեց հաղթել այսպիսի հեղինակավոր մրցաշարում: Շնորհակալ եմ Աստծուն, հենց նրա ու իմ հավատքի շնորհիվ եմ հաղթել: Հատուկ շնորհակալություն նաեւ իմ անձնական մարզիչ Ստեփան Շահմուրադյանին եւ Հայաստանի խառը մենամարտերի (MMA) ֆեդերացիայի նախագահ Գարեգին Աղաբալյանին՝ մշտապես իմ կողքին լինելու համար,- ասել է չեմպիոնը:

Կարեն Ղազարյանը 2018-ին Վրաստանում կայացած Խառը մենամարտերի (MMA) սիրողական միջազգային մրցաշարում փայլուն հաղթանակ է տարել ադրբեջանցի մրցակցի հանդեպ՝ ընդամենը 13 վայրկյանում տեխնիկական նոկաուտի ենթարկելով նրան: Այս հաղթանակը եւս անմոռանալի է նրա համար:

Կարենի անձնական մարզիչը՝ Ստեփան Շահմուրադյանը, մեկնաբանեց, որ One Championship-ը համարվում է աշխարհի ամենահեղինակավոր մարտական կազմակերպություններից մեկը, որտեղ հանդես են գալիս MMA-ի, մուայթայի, քիքբոքսինգի եւ գրեփլինգի լավագույն մարզիկները աշխարհի տարբեր երկրներից: Այն երկրորդն է UFC-ից հետո: Իր սան՝ Կարեն Ղազարյանի հաղթանակը պատմական է համարում, քանի որ Հայաստանում ապրող, պարապող որեւէ մարզիկ մինչ այս չէր հաղթել այս հեղինակավոր մրցաշարում: Կարենի հետ միասին երկար ճանապարհ են անցել, նրա առաջին տիտղոսը սիրողական MMA-ում աշխարհի փոխչեմպիոնությունն էր, որից հետո պրոֆեսիոնալ հարթակում հաղթանակ տոնեց GFC-ում, NAIZA-ում ու արդեն երկրորդ փորձից, դժվար ու շատ կարեւոր հաղթանակ տոնեց One Championship-ում: Մարզչի խոսքով՝ Կարեն Ղազարյանին արդեն տարբեր տեղեր նկատել են եւ ուզում են հրավիրել մենամարտերի արդեն չեմպիոնական գոտիների համար: Կարենը օժտված է կամային բարձր հատկանիշներով, շատ կարգապահ եւ կշռադատված մարզիկ է, որի հետ մեծ հույսեր է կապում մարզիչը: Առանձնահատուկ շնորհակալություն են հայտնում ֆեդերացիայի նախագահ Գարեգին Աղաբալյանին, որի ներդրումը շատ մեծ է մարզիկների գրանցած հաջողություններում:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՄՊՐՈՒԿԻ ՄԵՋ ՉՏԵՂԱՎՈՐՎԱԾ ԿՅԱՆՔ

7 ☜

Պապի մտքով ակամայից դրվագ առ դրվագ անցան հայոց պատմության ողբերգական ժամանակները, և խորը հառաչ քաշելով՝ հարցրեց՝ ո՞ւր ենք գնում: Մարդ էլ օրը ցերեկով իր տնից-տեղից գնա, ո՞ւր ենք գնում, ո՞ւր եք ինձ տանում: Մեզ աքսորում են, սա աքսոր է,- կոկորդի մեջ խեղդելով՝ արտաբերեց ու նստեց մեքենան: Սարսափելի էր զգալ ու տեսնել, թե ինչպես են քեզ ոչնչացնում, արծվից դարձնում անզոր ու թուլամորթ ճնճղուկ: Պապն անդադար մտքերի հետ էր, փորփրում էր հիշողությունները, դեմ առ դեմ նստած էր իրենց հանդեպ իրականացված հրեշային ոճրագործության փաստի առաջ, անհուսալի ապագայի առաջ:

- Քու հյար շտեղա՞,- հարցրեց թոռանը:

- Քեցալա բենզինու հետա,- պատասխանեց թոռը՝ երկար հառաչ քաշելով:

- Դե տոռնը քլիդի,- արցունքների միջից արտաբերեց պապը:

Թոռը կողպեց տան դուռը, ապա բանալիները զգուշությամբ դրեց գրպանի մեջ, որ հանկարծ չկորցնի: Միակ բանը, որ տանում են իրենց տնից, բանալիներն են: Մի օր գուցե ետ վերադառնան, տունը ավերված չտեսնեն: Թեպետ հոգու խորքում գիտեին, որ թուրքը ոչ մի կողպեքի չի նայելու, մտնելու են ու…..

Որդին եկավ, սակայն դատարկածեռն, ոչ մի տեղ վառելիք չկա, եկավ ու հուսաբեկ նստեց մեքենան: Մի պահ հիշեց, որ հրաժեշտ չի տվել տանը, անգամ չի մտել տուն ու չի վերցրել մի հուշ, գոնե տաք վերարկուն, որ ցրտին ծածկվեր: Իրականում ոչինչ չէր զգում՝ ո՛չ ցուրտ, ո՛չ տաք, ընդարմացել էին զգայարանները, սառել էր ու կարկամել: Միտքն էլ չէր ընդունում աչքի առաջ կատարվող իրականությունը: Առաջ եկան կռվի օրերը… Պետք էր անխնա կոտորել դրանց, որ այսօր չզրկեին մեր տներից: Մինչ այսօր արկերի բեկորները մարմնում իրենց զգացնել էին տալիս, ցավեցնում, որովայնի վերջին երկու վիրահատությունների վերքերն էլ դեռ թարմ էին, բեկորները վնասել էին կենսական կարևոր օրգանները, բայց հոգու ցավից այժմ ոչ մի մարմնական ցավ չէր զգում, ասես մարմինը չկար, կար միայն վառված սիրտ ու պրկված, ցավագար ջղեր:

Մեքենան շարժվեց՝ ետևում թողնելով Խաչենն իր դատարկվող տների ու ննջեցյալների հետ միայնակ, վիզը ծուռ: Միակ կենդանության նշույլը որբացած շներն ու կատուներն էին, որ տերերի հետևից անհույս կաղկանձում էին՝ կարծես զգալով իրենց անտեր մնալը:

Աշնան արևը, որ բարձրացել էր գյուղի սուրբ Ստեփանոս եկեղեցու գմբեթից վեր, ասես անիմաստ շողում էր ու իզուր փորձում էր ջերմացնել ամայացող երկիրը, հեռացող մարդկանց ընդարմացած սրտերը, ասես հետ էր կանչում, երևի ուզում էր ասել՝ մի՛ գնացեք, արտը հնձեք, բերքը հավաքեք… Մեքենան դանդաղ սլացավ Արուսյակի կամրջով դեպի անորոշություն…

Ստեփանակերտ տանող ճանապարհին զարմանալիորեն մեքենա գրեթե չկար, վերին գյուղերի բնակչությունը մի գիշերվա մեջ դուրս էր եկել՝ ով ինչով և ինչպես կարողացել է. մեկը՝ մեքենայով, մեկը՝ ձիով, մեկը՝ ոտքով, անտառներով ու ձորերով: Վերջինն իրենք էին, որ ետ նայելով դուրս եկան: Գյուղը լքելու հրահանգի օրը Ալեքսանդր պապը չուզեց դուրս գալ. նախ դա գիտակցության մեջ չտեղավորվեց, և ապա ցանկացավ մի գիշեր էլ իր տանը քնել, գուցե հաջորդ օրը լույսը բացվելուց ինչ-որ բան փոխվեր: Հույսը չէր կորցնում, բայց առավոտյան եղավ անխուսափելին՝ իրենց հազար տարվա գյուղը պիտի թողնեին, թուրքերն արդեն մտել էին գյուղերն ու խոշտանգում էին անզեն մնացած մարդկանց:

Արցախի ամենահին գյուղերից մեկն է Խաչենը, հնում Սեյդիշեն՝ ուսուցչի գյուղ անվամբ: Հնամյա գյուղի մասին են պատմում 12-13-րդ դարերի խաչքարերն ու ավելի վաղեմություն ունեցող՝ գյուղի գերեզմանատան քարերի վրայի գրությունները:

Հիշեց Ղազարոս Աղայանի գերդաստանի գլխավոր Աղանց Վերդիին, ով 300 տարի առաջ նույնպես ստիպված էր բռնել գաղթի ճանապարհը: Մեծ գրողը եղել է Խաչենում և իր աչքով տեսել Աղանց բաղն ու աղբյուրը, Աղանց ընկուզենին, որն այն ժամանակ մի չոր կոճղ է եղել: Ալեքսանդր պապը խնամքով էր ցանում Աղանց տափը և Աղանց ընկուզենու բարիքները հյուրասիրում ամեն անցվորի:

Մեքենան կանգնեց Ստեփանակերտի Մազի կամրջի մոտ գտնվող բենզալցակայանի մոտ, ահավոր հերթ էր: Բոլորը սպասում էին վառելիքի: Ավելի քան 20 ժամ սպասելուց հետո լիցքավորեցին մեքենան ու շարժվեցին առաջ: Մեքենաների հոսքն այնքան մեծ էր ու խիտ, որ երեք օր տևեց 4-5 ժամվա ճանապարհը: Մինչ կհասնեին Հակարի կամրջին, որտեղ անցակետն էր, ու կանգնած էին թուրքերը, Ալեքսանդր պապը ճանապարհին վատացավ: Մի կողմից սարսափելի հոգեկան տառապալից վիճակը, մյուս կողմից անվերջ ձգվող ավտոշարասյուների հոգեհան անող դանդաղ ընթացքն ավելի անտանելի էին դարձնում: Թոռը դիմեց ռուս խաղաղապահներին՝ պապին փրկելու նպատակով: Գրեթե մեկ կիլոմետր ոտքով քայլեց դեպի ռուսական զորամասը և օգնություն խնդրեց: Դժվարությամբ համոզեց, որպեսզի գան ու պապիկին օգնություն ցուցաբերեն: Մեկ ժամ անց ռուսական շտապ օգնության մեքենան եկավ, բայց պապը ոչ միայն չնստեց մեքենան, այլև նրանց առերես մեղադրեց իրենց հետ կատարվող աղետի համար: Երկու ռուս զինվորականները, որ մեծ դժվարությամբ էին հաղթահարել ճանապարհը. վրդովված թողեցին ու գնացին: Հետևից կանայք աղերսեցին, որպեսզի իրենց երեխաներին կամ տարեցներին տանեն: Զինվորականները նրանց խնդրանքին անհաղորդ մնացին:

Գաղթի ճանապարհը հյուծիչ էր ու անտանելի, նրանց աչքի առաջ վշտից ու սովից երկու կին մահացան. նրանց դիակները հանեցին մեքենաներից ու դրեցին ճանապարհի կողնակին: Շատերը վառելիք չունենալու պատճառով թողել էին նաև իրենց մեքենաները: Ամբողջական գյուղեր տեղավորվել էին բեռնատարների մեջ. գլխիկոր ծեր ու մանուկներ, կանայք ու տղամարդիկ հուսահատ կանգնած էին թափքին, և նրանց քարացած աչքերում վշտի անհունություն էր դաջված: Նրանք անգամ չգիտեին՝ ուր են գնում և ինչ է լինելու իրենց հետ: Կային մեքենաներ, որ այդպես էլ Հայաստան չհասան, ավտովթարներից կամ գլորվեցին ձորը, կամ ուղևորներով հրդեհվեցին:

Մեքենան դանդաղ մոտեցավ Հակարի կամրջին: Մի ամբողջ զորք էր կանգնած կամրջի աջ ու ձախ կողմերին, հերթով ստուգում էին բռնատեղահանվածներին: Հրամայեցին իջեցնել ապակիները, որպեսզի ավելի տեսանելի լինեին ներսում գտնվողները, վեց թուրք զինվորական գլուխները խոթեցին մեքենայի պատուհաններից ներս: Մանրակրկիտ զննելուց հետո թույլատրեցին առաջ ընթանալ:

Անցնելով կամուրջը՝ հասան Գորիս, այնտեղից էլ՝ Երևան, ասել է թե՝ փրկվեցին: Հուզումներից, լարվածության, ջղաձգման ու սարսափի փոթորկահույզ գրոհումներից հետո իրականության գիտակցումից մտախռով պապը ամբողջ մարմնով կուչ եկավ վարձու բնակարանի բազմոցին: Շուրջն ամեն ինչ օտարոտի էր, օտարություն էր փչում ամեն ինչից, բայց ինքն այլևս նրան էր պատկանում՝ այդ օտար ու խորթ միջավայրին, դեպի տուն վերադարձի այլևս ոչ մի ճանապարհ չկար:

Օրեր, ամիսներ գլորեցին երևանյան բնակարանում՝ կարոտելով իրենց օջախին, իրենց երկրին: Ալեքսանդր պապն իրեն հատուկ դիմադրողականությամբ դիմակայում էր անասելի ուժով ու գերմարդկային տոկունությամբ՝ ամեն օր իր տան կարոտից մաշվելով, բայց հոգու խորքում հույս փայփայելով, որ մի օր անպայմանորեն վերադառնալու է իր երկիր: Նա չէր ուզում այդքան հեշտ ու հանգիստ հանձնվել, անհետ ջնջվել, ոչնչանալ… Սակայն վիշտն ավելի ուժեղ գտնվեց և տապալեց նրան՝ մարելով պապենական հողում հող դառնալու միակ ցանկությունը:

Ժամանակ առ ժամանակ նրա հիշողության ծալքերում հառնում էին հրապուրիչ ու դյութող հայրենի գյուղաշխարհն ու նրա մարդիկ: Անուններ էր արտաբերում, որոնք վաղուց չկային, հանգչում էին գյուղի գերեզմանատանը: Անվերջ խոսում էր գյուղի մարդկանց հետ, ասես, ողջ են և ներկա են, իր կողքին են ու զրուցում են երկրի անցուդարձից: Մի ուրիշ աշխարհում էր՝ իրեն հարազատ ու ջերմ: Գոհունակ ժպիտը դեմքին՝ ասես չէր ուզում դուրս գալ այդ աշխարհից…

Ամբողջ օրը ոչինչ չկերավ, երեկոյան թոռը փորձեց կերակրել, բայց, իզուր, պապը ոչինչ չկերավ, ասաց՝ հետո: Հանգիստ ու խաղաղ քնով անցավ: Այդ գիշեր նրա աչքերն առհավետ փակվեցին: Տառապալի դեմքն այլևս խաղաղ էր՝ հոգին վերջապես տուն էր վերադառնում:

«Գրական թերթ»
10/07/2026

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ

✉ ք.Երևան,
Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները:
Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Թերթը վաճառքի ենթակա չէ:

Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում:
Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Տպաքանակ՝ 500
Ստորագրված է տպագրության՝ 29.07.2026թ.: